

Շաբաթըն բաժին

- Խմբագրական.....1
- Լրատուական.....2-8
- Շուշի.....9-11
- Ապրիլեան.....12-13
- Հասարակական.....14-15
- Մշակոյթ - Գրական էջ.....16
- Մշակոյթ.- Մ. Խորենացին պարսկերէն....17-18
- Մշակոյթ - Իրանահայ Գաղթօջախները...18-19
- Առողջապահական.....21
- Մանկական.....22

Պարսկերէն բաժին

- Խմբագրական.....1
- Ամփոփ լուրեր՝ Իրանահայ համայնք.....2
 - Իրան.....2
 - Հայաստան.....2
 - Միջազգային.....4
 - Ձանազան.....5
- Գրականութիւն.....6-7
- Ապրիլ.....8
- Մ. Խորենացին պարսկերէն9-10

Շաբաթի առաջին էջում՝

Սասունցի Դաւիթ

Շաբաթի վերջին էջում՝

Խրիմեան Հայրիկ

Զանաթ 51-52 31 Մայիսի, 2002 թ.

No. 51-52 31 May 2002

Գեղխատուրու Խաւրթաւագլիլու
Էդ. Բաղդասարեան

Խաւրթաւագլիլու Լրատու

Կ. Սարգսեան, Լ. Սիարոնեան
Ա. Խեչումեան, Վ. Վարդանեան

Մայիսեան մտորումներ

Արդարօրէն Մայիս ամիսը պէտք է անանել «Հայոց փառի ամիս», քանզի մայիս ամսում տեղի են ունեցել այնպիսի իրադարձութիւններ, որոնք մեծ եւ անսակարկելի դեր են ունեցել մեր ժողովրդի գոյատեւման հարցում: Յիշենք դրանցից մի քանիսին:

Սարդարապատի հերոսամարտ

1918թ. մայիսի 21-ին թուրք բարբարոսները օգտուելով 2-րդ համաշխարհային թոհուրոհից եւ ովետուելով 1915թ. Հայոց Յեղասպանութիւնը իրագործելու յաղթանակից, որոշում են մէկընդմիջտ վերջ տալ հայ ժողովրդի գոյութեանը եւ գործադրել վաղուց իսկ փայփայած իրենց զագանային նպատակը: Ուստի թուրքերը իրենց զինած հերոսակներին ուղարկում են Արեւելեան Հայաստան, որպէսզի վերջ տան հայ ժողովրդի այդ հատածին նոյնպէս:

Թուրքը գրաւելով հայկական քաղաքներն ու գիւղերը գտնում էր Երեւանի մօտակայքում: Հայկական զօրքը որոշել էր դիմադրել եւ տեղի ունեցաւ «Սարդարապատի» ճակատամարտը: Եւ այդ ճգնաժամային պահին, հայրենիքի պաշտպանութեան համար, միահամուռ մղումով, ուրքի կանգնեցին մեծից փոքր՝ տղամարդ ու կին, հասարակական տարբեր խաւեր եւ քաղաքական կուսակցութիւնների ներկայացուցիչներ, հոգետրականներ եւ...:

Մեծ պարտութիւն կրեց թուրքը, իսկ անկասկած յաղթեց միասնականութեան ոգին:

Ղարաքիլիսայի ճակատամարտ

1918թ. մայիսի 24-28-ին հայկական եւ թուրքական զօրքերի միջեւ Ղարաքիլիսայում (այժմ՝ Վանաձոր) տեղի ունեցաւ ճակատամարտ: Անհաւասար էր երկու կողմերի հնարաւորութիւնները: Այսուամենայնիւ թուրքերը պարտութիւն կրելով՝ հարկադրած թողեցին պատերազմական դայրը:

Բաշ Ապարանի ճակատամարտ

1918թ. մայիսի 23-29-ին տեղի ունեցաւ Բաշ Ապարանի ճակատամարտը: Այստեղ եւս հայկական զօրքը ստիպեց թոնամուն նահանջել:

Անկախ Հայաստանի Հանրապետութիւն

Ձեռքագատուելով պարտադիր պատերազմներից, վերջապէս հայ ժողովուրդը 1918թ. մայիսի 28-ին 543 տարի ազգային պատկանելութիւնից զրկւած լինելուց յետոյ, իրականացրեց իր դարաւոր երազանքը՝ կերտելով Հայաստանի առաջին անկախ հանրապետութիւնը:

Շուշիի ազատագրումը 1992 թ. մայիսի 9-ին

Այս բոլոր յաջողութիւններն ու յաղթանակներն արդիւնաւորեցին միայն միասնականութեան շնորհիւ, ինչը այսօր առաւել եւս անհրաժեշտ է մեր ժողովրդին: Իրաւ տեղին է ասաւծ.« Մէջք մէջքի որ տանք, սարեր շուռ կը տանք»:

Իրանահայ համայնք

Շագարաւոր հայորդիներ ապրիլի 24-ին ցոյցի էին դիմել արդար պահանջատիրութեան համար

Սոյն թականի ապրիլի 24-ին թեհրանահայերը հաւաքուել էին Ս. Սարգիս եկեղեցում իրենց խոր բողոքը յայտարարելու, այն աննախընթաց մարդասպանութեան համար, որ 1915 թականին իրագործեց Թուրքիայի Օսմանական բարբարոս իշխանութիւնը, որին զոհ դարձան 1.5 միլիոն անմեղ եւ անպաշտպան հայ ժողովուրդը: Մի ցեղասպանութիւն, որ Թուրքիայի ծրագրի ոչ սկիզբն էր եւ ոչ էլ վերջը, քանզի այդ գազանային գործունէութիւնը սկսել էր դեռ 1860թ. եւ շարունակուել մինչեւ 1922 թականը, որի ընթացքում հայ անմեղ զոհերի թիւը հասնում էր 2.284.000-ի:

Այստեղից էլ ըստ ծրագրի քայլարշաւը սկսեց Ս. Սարգիս եկեղեցու շրջափակից դէպի Թեհրանում գտնուող ՄԱԿ-ի գրասենեակը:

Քայլարշաւից առաջ Թեհրանի Հայոց Թեմի հոգեւոր առաջնորդ Տէր Ս. Եպիս. Սարգսեանը իր տպաւորիչ ճառով մեծ խանդավառութիւն ստեղծեց: Սրբազան Հայրը իր ելոյթում ասաց. «Փառք ենք տալիս Աստծուն, որ այսօր մէկ ու կէս միլիոն նահատակները յարութիւն են առել մեր կեանքի մէջ, ու այսօր նրանք ամէն տեղ են՝ Դեր Զօրից մինչեւ Ծիծառնակաբերդ, Ստեփանակերտ, Երոպա եւ ամենուր...: Քայլէ սիրելի ժողովուրդ, քայլէ քո նահապետների տէրակալանով... որպէսզի աշխարհում չմնան իրաւագրկած ժողովուրդներ, այլ միշտ արդարութեան եւ ճշմարտութեան ու խաղաղութեան դրօշը ծածանի բոլոր երկրների երկնակամարի վրայ...»

Այն ինչ այս անգամայ քայլարշաւը տարբերում էր միւսներից՝ երիտասարդ եւ պատանի մասնակցողների գերակշիռ թիւն էր, որը նոր յոյս էր ներշնչում:

ՄԱԿ-ի գրասենեակի մօտ ալոյթ ունեցաւ Իսլամական հիւսիսային իրանահայութեան պատգամատուր դոկտ. Լեւոն Գալսեանը: Նա իր ալոյթի ընթացքում յայտարարեց, որ Իսլամական խորհրդարանի 30 պատգամատուրներ կոչ են արել ճանաչել Հայոց Յեղասպանութիւնը:

Քայլարշաւի վերջում ընթերցեց 9 կէտից բաղկացած մի բանաձեւ, եւ ժողովուրդը երգելով «Սարդարապատը» թողեց հաւաքավայրը:

Ձեռնարկ նկրած Մեծ Եղեռնին Ի. Ա. Մ. Միւրսիւնում

Իրանահայ Ազգային եւ Մշակութային (ԻԱՄՄ) ապրիլի 25-ի ձեռնարկը նկրած էր Հայոց Յեղասպանութեան ոգեկոչման 87-ամեակին:

Բացման խօսքից յետոյ բանախօսութեամբ ելոյթ ունեցաւ դոկտ. Արմինէ Ղազարեանը: Բանախօսութեան թեման էր «Հայկական հարցը եւ միջազգային դիւանագիտութիւնը»: Յարգելի բանախօսը նպատակ ունէր բացատրել, թէ ինչպէս են հայկական հարցը շօշափում միջազգային դիւանագետների կողմից: Տպաւորիչ էր

բանախօսութիւնը, մանաւանդ այն պատճառով, որ բանախօսը օժտւած էր բեմային իւրայատուկ կարողութիւններով:

Ծրագրի մի մասում բեմադրուեց Պերճ Զէյթունցեանի «Ռքտի դատարանն է գալիս» թատերգութիւնից մի հետւած:

Ներկայացումը թէ բեմադրութեան իմաստով եւ թէ դերակատարութեան առումով շատ յաջողակ պէտք է համարել:

Ամուսններով ելոյթ ունեցան Զեփիւռ Ամիրեանը, Բիայնա Սինանեանը եւ Մեղեղի Յարութեանը: Ծրագիրը վարում էր Փիւնիկ Միմոնեանը:

Յեղասպանութեան նկրած սեմինար Ի. Ա. Մ. Մ-ում

Սոյն թականի ապրիլի 26-ին «Իրանահայ Ազգային եւ Մշակութային Միութիւն»-ում (ԻԱՄՄ) կազմակերպուել էր մի սեմինար «Եղեռնը եւ մեր անելիքները» թեմայով, որի նախաձեռնողն ու կազմակերպողը ԻԱՄՄ էր, որտեղ հրաւիրուել էին բանախօսներ ելոյթ ունենալու նախատեսւած թեմայով:

Ձեռնարկը վարում էր դոկտ. Անդրանիկ Միմոնեանը, որը բացման խօսքով հանդէս եկաւ: Այնուհետեւ խօսք առաւ կազմակերպիչ յանձնախմբի խօսնակ՝ Գուրգէն Աբնուսեանը, որը հակիրճ տեղեկութիւններ փոխանցեց սեմինարի կազմաւորման մասին:

Նախքան բանախօսների ելոյթը, ընթերցեց Թեհրանի Հայոց Թեմի առաջնորդ Ս. եպս. Սարգսեանի գրաւոր ուղերձը ուղղւած սեմինարի կազմակերպիչներին:

Որպէս առաջին բանախօս բեմ հրաւիրուեց «Գրական շրջանակ»-ի ներկայացուցիչ եւ իրանահայ հանրամասօք գրող եւ բանաստեղծ Խաչիկ Խաչերը (Գալստեան): Ըստ բանախօսի առաջարկի ելոյթի փոխարէն ընթերցեց նրա արձակ ստեղծագործութիւններից մէկը, որի բովանդակութիւնը առնչուում էր Եղեռնին:

Երկրորդ բանախօսն էր թերթիս խմբագրականի անդամ Վաչիկ Վարչանեանը: Նա նախ հակիրճ ձեռնարկով անդրադարձաւ Յեղասպանութեան գաղափարի ստեղծմանը եւ նրա դրդապատճառներին: Բանախօսը յատկապէս յիշեցրեց, որ Հայոց Յեղասպանութեան հարցի քննարկման համար միայն չպէտք է բարարուել 1915-ի կոտորածներով, քանզի այդ ջարդերը սկսուել էր 1860թ. մինչեւ 1922 թականը: Այնուհետեւ նա բացատրեց, թէ ինչ պէտք է անեն մեր համայնքի տարբեր կազմակերպութիւնները եւ պատասխանատու անձերը (մամուլը, միութիւնները, խորհրդարանի պատգամատուրները, ազգային մարմինները եւ այլն):

Օրուայ երրորդ բանախօսն էր իրանահայ մտաւորական եւ հասարակական հարցերի հետազօտող՝ Հրաչ Ստեփանեանը: Նա խօսեց այն մասին, որ պատմականօրէն ինչպէս պէտք է հարցը քննարկել: Ըստ Ստեփանեանի, երբ քննարկում է ցեղասպանութեան հարցի պատմականը, պէտք է խոյս տալ զգացական արտայայտութիւններից եւ խոսափել ածականներից, քանզի այսօր ըստ բանախօսին միջազգային դիւանագիտութեան մօտ մնան բան ընդունւած չէ:

Վերջին բանախօսն էր ԻԱՄՄ նախագահ՝ Արմաւիր Մարգարեանը: Վերջինն եւս անդրադառնալով կատար-

լամ արհաւիրքին, առաջարկեց. « Պէտք է միասնականօրէն աշխատենք, որպէսզի Հայց Եղեռնի փաստը ճանաչի աշխարհի պետութիւնների կողմից»:

Բանախօսների ելոյթներից յետոյ, նրանք պատասխանեցին ներկաների հարցերին: Այստեղ եղան բազմաթիւ հարցեր, որոնց մի մասը իհարկէ չէր առնչուում օրայ թեմային: Բանախօսները պատասխանեցին իրենց տրամ հարցերին: Իրօք ստեղծել էր մի հետաքրքիր եւ ցանկալի մթնոլորտ:

Ինչ խօսք, որ ողջունելի է ԻԱՄՄ այս ազգօգուտ քայլը: Նմանատիպ սեմինարներ ու ձեռնարկներ մեծապէս կը ծառայեն մեր նպատակների իրագործմանը:

Շ. Ս. «Սիփան» միութեան ձեռնարկը նւիրած Մեծ Եղեռնի ոգեկոչման 87-ամեակին

Սոյն թւականի ապրիլի 26-ին «Սիփան» միութեան Արեւտից բաժանմունքի կողմից «Նայիրի» սրահում կազմակերծուել էր մի գրական-գեղարուեստական ձեռնարկ՝ նւիրած Հայոց Յեղասպանութեան 87-ամեակին:

Բեմադրարկում վեր էր խոյացուել Ծիծեռնակաբերդը եւ հայ ժողովրդի սիմուլը՝ «Արարատ» սարը:

Ասումնքով ելոյթ ունեցան Գրիգոր Ամեանը, Սեդրակ Գոչամանեանը, Արփի Ալլահվերդեանը եւ Լալա Երամեանը: Ասումնքի ընթացքում մեներգչուհի ՕՖիկ Սելիքեանը, դաշնակահար Մայիս Մատթոսեանի ընկերակցութեամբ կատարում էր կոմիտասեան ինքնատիպ երգերը:

Ձեռնարկի ընթացքում բեմադրուեց մի փոքրիկ հատում հայ հանճարեղ Կոմիտասի կեանքից:

Ծրագիրը եզրափակեց «Կարաւան» պարախումբը՝ կատարելով հայկական մի շարք աւանդական պարեր:

Իրան

Ռուսաստան-Իրան համագործակցությունը մտահոգում է ԱՄՆ-ին

Փետրը «քաղցրաբլիթ» է առաջարկում Մոսկվային

Ամերիկացի ազդեցիկ գործիչներից մեկը՝ ԱՄՆ պաշտպանության նախարարությանն առընթեր պաշտպանական քաղաքականության խորհրդի ղեկավար Ռիչարդ Փեռը հայտարարեց, թէ միջուկային տեխնոլոգիաների բնագավառում Մոսկվա-Թեհրան համագործակցությանը վերջ դնելու լավագույն եղանակը ԽՍՀՄ-ից Ռուսաստանի ժառանգած պարտքերը չեղյալ հայտարարելն է: Ռուս-ամերիկյան գազաթափոցում, անկասկած, քննարկվելու է «իրանական հարցը»: Այնպէս որ, դրա նախօրեին Մոսկվային առաջարկվող «քաղցրաբլիթ» հույժ այժմեական է:

Ռիչարդ Փեռը ղեկավարվում է այն տրամաբանությամբ, թէ «չարիքի առանցքի» երկրներ Իրանի, Իրաքի եւ ԿԺԳ-ՀԼԻ հետ Ռուսաստանի շարունակվող կապերը ռուսեամերիկյան հարաբերություններում առկա սակավաթիվ խնդիրներից են: Այդ պետությունների հետ

խիստ շահավետ պայմանագրերից հրաժարում պահանջելն անհեռատեսություն կլինէր: Հարկավոր է փոխարենն ինչևոր բան տալ Ռուսաստանին: Փեռը ամերիկացի փաստորեն առաջին բարձրաստիճան պաշտոնյան է, որ Մոսկվային նյութական խթան է առաջարկում Թեհրանի եւ Բաղդադի հետ այլեւս չգործակցելու դիմաց:

Ամերիկյան հատուկ ծառայությունների ներկայացուցիչները պնդում են, թէ միջուկային բնագավառում Ռուսաստանի եւ Իրանի համագործակցությունը չի սահմանափակվում Բուշեհի ատոմակայանի շինարարությամբ: «Իզվեստիա» թերթի տվյալներով, ամերիկացիները մտադիր են մոտ օրերս Մոսկվայում համապատասխան փաստաթղթեր ներկայացնել նախագահներ Վլադիմիր Պուտինի եւ Ջորջ Բուշի հանդիպման ժամանակ: Ի դեպ, Փեռը Ռուսաստանին ուղղակիորեն չի մեղադրում: Նրա կարծիքով, Իրանում Ռուսաստանի ակտիվության գլխավոր պատճառը տնտեսական «բացերն» են, առաջին հերթին՝ պաշտպանական արդյունաբերության անբավարար ֆինանսավորումը: Ըստ Փեռի, հենց այդ խնդիրը պետք է լուծի ԽՍՀՄ-ից Ռուսաստանի ժառանգած պարտքերի չեղարկումը, որոնք կազմում են շուրջ 42 մլրդ դոլար:

Իրանը հարգում է միջուկային զենքերի չտարածման պայմանագիրը

ԵՐԵՎԱՆ, 16 ՄԱՅԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: «Իրանի Իսլամական Հանրապետությունը միացել է միջուկային զենքերի չտարածման պայմանագրին եւ բոլոր երկրների հետ իր տնտեսական կապերի ու հարաբերությունների ընթացքում միշտ հարգում է այն, եւ այս հարցում բացառություններ չկան»: Ենչէլ է Հայաստանում Իրանի դեսպանության հասարակայնության հետ կապերի բաժինը՝ ի պատասխան Արմենպրեսի այն հարցի, թէ ընդունելով կամ հերքելով է արդյոք պաշտոնական Թեհրանն ԱՄՆ պետդեսպարտամենտի այն հայտարարությունը, թէ որոշ հայկական ընկերություններ ռազմական կամ երկակի տեխնոլոգիաներ են հանձնել Իրանին:

Իրանի նախագահը կայցելի Հայաստան

ԹԵՀՐԱՆ, 7 ՄԱՅԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Իրան-Հայաստան համատեղ տնտեսական հանձնաժողովի հայկական կողմի նախագահ Արտաշես Թումանյանը մայիսի 6-ին Թեհրանում հանդիպել է Իրանի նախագահ Խաթամիի հետ եւ փոխանցել ՀՀ նախագահ Քոչարյանի ուղերձը: Իրանի նախագահը հույս է հայտնել, որ կկարգավորվեն Իրան-Հայաստան գազատարի կառուցմանը եւ Իրան-Հայաստան-Հունաստան եռակողմ համագործակցությամբ իրանական գազը եվրոպական շուկա արտահանելու ծրագրերը: Խաթամիին նաեւ պատրաստակամություն է հայտնել նպաստել ԻԻՀ տարածքով թուրքմենական գազը Հայաստան ներկրելու ծրագրի իրականացմանը: Իրանի նախագահը հայտարարել է Հայաստան այցելելու իր պատրաստակամության մասին՝ ընդգծելով, որ հայկիրանական

հարաբերությունները երբեւէ ուղղված չեն լինի երրորդ կողմի դեմ:

Նույն օրը Արտաշես Թումանյանը հանդիպել է Իրանի ազգային անվտանգության խորհրդի նախագահ Հասան Ռովանիի հետ: Ռովանին նշել է, որ Իրանի եւ Հայաստանի միջեւ արդեն իսկ կնքված համաձայնագրերի կենսագործումը երկուստեք շահավետ կլինի եւ կնպաստի տարածաշրջանի զարգացմանը: Թումանյանը հայտարարել է, որ Իրանը կարեւորագույն դեր ունի տարածաշրջանային կայունության եւ խաղաղության ձեւավորման հարցում, եւ Հայաստանը հակված է ամրապնդել հարաբերությունները այս երկրի հետ: Կողմերը քննարկել են նաեւ ԼՂ հակամարտության խնդիրը:

Վաշինգտոնը հերքում է Իրան-ԱՄՆ գաղտնի բանակցությունների մասին լուրերը

ԱՄՆ պետքարտուղարությունն ընդգծել է, որ Վաշինգտոնը երկկողմ որեւէ շփում չի ունեցել Թեհրանի հետ, ընդամին նշելով, թե ամերիկացի պաշտոնյաներն իրանցի պաշտոնյաների հետ հանդիպումներ են ունեցել միջազգային ֆորումների շրջանակներում, մասնավորապես Աֆղանստանի հետ կապված հարցերով: «Մենք իրանցիների հետ չենք վարել ոչ ուղղակի եւ ոչ էլ գաղտնի բանակցություններ՝ քննարկելու երկկողմ հարաբերությունները», ասել է պետքարտուղարության խոսնակ Ռիչարդ Բաուչերը:

Բաուչերի հայտարարությունը պատասխանն էր իրանական մամուլում պարբերաբար հայտնվող լուրերի, թե Թեհրանը եւ Վաշինգտոնը բարձր մակարդակով գաղտնի բանակցություններ են վարում երրորդ երկրներում: Մասնավորապես, մայիսի 8-ին Իրանի խորհրդարանի արտաքին հարցերով հանձնաժողովի նախագահ Միրզամադին հայտարարել էր, թե Շվեյցարիայում եւ Կիպրոսում արդեն տեղի են ունեցել իրանա-ամերիկյան մի քանի փուլերով բանակցություններ, որոնց մասնակցել են երկու պետությունների արտաքին գերատեսչությունների բարձրաստիճան պաշտոնյաներ:

«Ազգ»

Հայաստան

**Հայությունն ակնկալում է ոճրագործության ճանաչումն ու դատապարտումը
ՀՀ նախագահ Ռոբերտ Զոհարյանի ուղերձը
ցեղասպանության զոհերի հիշատակի օրվա
կապակցությամբ**

Միրելի հայրենակիցներ,
Այսօր ողջ հայ ժողովուրդը, ինչպես ամեն տարի, ոգեկոչում է Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը: 1915 թվականի այս օրը հայ մտավորականության եւ հոգեւորականության ձերբակալություններով Օսմանյան Թուրքիայում սկսեց իրականացվել պետականորեն կազմակերպված մի ոճիր, որ պիտի դառնար հայ ժողովրդի պատմության ամենատրեղբոսական էջը: Հարցականի տակ դրվեց իր բնօրրանում հազարամյակների քաղաքակրթություն ու մշակույթ ստեղծած մի


ողջ ժողովրդի ապագան: Հայության բոլոր հատվածները մինչեւ այսօր իրենց ճակատագրի վրա կրում են անցյալ դարասկզբի ողբերգական իրադարձությունների ծանր դրոշմը:

Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հետապնդումը Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության օրակարգում արտահայտությունն է հայ ժողովրդի օրինական պահանջների եւ սպասումների:

Հայրենաբնակ եւ աշխարհասփյուռ հայության բոլոր հատվածներն այսօր շարունակում են ակնկալել մարդկության դեմ կատարված ոճրագործության ճանաչումն ու դատապարտումը: Դա վիեժխնդրական զգացումների արտահայտությունն է, այլ նմանօրինակ հանցագործությունների կրկնությունը բացառելու մտահոգություն:

Այսօր մենք գլուխ ենք խոնարհում մեր նահատակների հիշատակի առջեւ՝ այն խորը համոզմամբ, որ պատմական արդարության վերականգնումն անխուսափելի է: Մենք հավատով ենք նայում ապագային, մեր երկրի ու պետականության ծաղկուն վաղվա օրվան, որ համայն հայությունը կերտելու է միասնական ջանքով ու նվիրումով:

Ծիծեռնակաբերդի բարձունք. ապրիլի 24



ԵՐԵՎԱՆ, 24 ԱՊՐԻԼ, ԱՐՄԵՆՊԻԵՍ: Այսօր վաղ առավոտից հայ ժողովրդի զավակները Երեւանի Ծիծեռնակաբերդի բարձունք տանող բոլոր ճամփաներով շարժվեցին դեպի 1915 թվականի Հայոց ցե-

դասապանության գոհերի հուշարձան՝ իրենց հարգանքի տուրքը մատուցելու Եղեռնի գոհերի հիշատակին: Նրանց հետ հավերժական կրակի մոտ գլուխ խոնարհեցին նաև աշխարհի տարբեր կողմերից ժամանած հյուրեր, Հայաստանում հավատարմագրված օտարերկրյա դիվանագետներ, միջազգային կազմակերպությունների, տարբեր երկրների լրատվական ծառայությունների ներկայացուցիչներ, այդ թվում՝ Թուրքիայի հեռուստալրագրողներ, որոնք նկարահանումներ արեցին CNN-ի համար:

Առավոտյան ժամը 11-ին հարգանքի տուրք մատուցելու եկավ հանրապետության ղեկավարությունը՝ ՀՀ նախագահ Ռոբերտ Բոչարյանը, ՀՀ Ազգային Ժողովի նախագահ Արմեն Խաչատրյանը, ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանը, ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանը, ինչպես նաև ԼՂՀ նախագահ Արկաղի Դուկասյանը, Երեւանի քաղաքապետ Ռոբերտ Նազարյանը, ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ, կառավարության անդամներ, որոնք մեկ րոպե լռությամբ գլուխ խոնարհեցին անմեղ անհատակների հիշատակի առջև:

Իր շքախմբով այստեղ ժամանեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսը:

Ծաղիկներ դրվեցին նաև 20-րդ դարի վերջի հայ ազատագրական պայքարում իրենց կյանքը նվիրաբերած ազատամարտիկների շիրիմներին, Մումգայիթում եւ Ադրբեջանի այլ քաղաքներում իրագործված նոր ցեղասպանության գոհերի հուշաքարերին:

Կատարվեց հոգեհանգստյան պաշտոն՝ Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի հանդիսապետությամբ:

...Անցնում են տասնյակ հազարավոր մարդիկ՝ հայաստանաբնակ հայեր, սփյուռքահայեր, օտարազգի մասնագետներ ու զբոսաշրջիկներ, ու բոլորը գլուխ են խոնարհում հավերժական կրակի մոտ, հայ ժողովրդի մեկուկես միլիոն անհատակների հիշատակի առջև:

Ռաֆայել Էստրելա. 1915-ին կատարվածը պետք է հստակ բնորոշել որպես ցեղասպանություն

ԵՐԵՎԱՆ, 15 ՄԱՅԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Հայաստանի դիմումը ՆԱՏՕ-ի Խորհրդարանական վեհաժողովի (ԽՎ) ասոցիացված անդամ դառնալու վերաբերյալ, որի մասին երեկ պաշտոնապես հայտարարել է ՀՀ ԱԺ նախագահ Արմեն Խաչատրյանը, կքննարկվի եւ կընդունվի ձայների 2/3-ը ապահովելու դեպքում: Մայիսի 15-ին Երեւանում կայացած ասուլիսում այս մասին հայտարարեց ՆԱՏՕ-ի ԽՎ նախագահ Ռաֆայել Էստրելան:

Նման դիմումով Ադրբեջանը հանդես է եկել 1,5 տարի առաջ, իսկ Վրաստանն արդեն իսկ ՆԱՏՕ-ի ԽՎ անդամ է հանդիսանում: Էստրելայի խոսքերով, Վեհաժողովի ղեկավարությունը կնախընտրեր, որպեսզի Հայաստանը եւ Ադրբեջանը միաժամանակ անդամակցեցին նշված կազմակերպությանը՝ հավասարակշռություն պահպանելու նկատառումներով: Նա ընդգծեց, որ Վեհաժողովը մեծապես կարեւորում է Հարավային Կովկասում առկա հակամարտությունների կարգավորումը եւ հաղորդակցության ուղիների ազատությունը:

Կիպրոսի խորհրդարանը խստորեն դատապարտեց ցեղասպանությունը

Կիպրոսի մայրաքաղաք Նիկոսիայից հաղորդվում է, որ երկրի խորհրդարանը ընդունել է բանաձեռ՝ խստորեն դատապարտելով երիտթուրքերի ծրագրած եւ իրագործած 1,5 մլն հայերի ցեղասպանությունը, եւ մեկ րոպե լռությամբ հարգել անմեղ գոհերի հիշատակը: Կիպրոսը Եվրոպայի առաջին պետությունն է, որը ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայում բարձրացրել է Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը նախագահ Մակարիոսի նախագահության տարիներին: Կիպրոսի խորհրդարանի հայազգի պատգամավոր Պետրոս Գալաջյանը լիագումար նիստում արտահայտել է «յուրաքանչյուր հայի երախտագիտությունը»: Կիպրոսի բոլոր քաղաքական կուսակցություններն առանձին տարածած հայտարարությամբ խստորեն դատապարտել են Թուրքիային եւ «եղբայրական Հայաստանի ժողովրդին հայտնել իրենց համերաշխությունը»:

«Արցախը մեծ հույսեր է կապում սփյուռքի հետ»

Ասում է Արկաղի Դուկասյանը, ընդունելով Հայկաշեն Ուզունյանին եւ Ռուբեն Սիրզախանյանին

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ, 7 ՄԱՅԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: ԼՂՀ ղեկավարությունը կարեւոր նշանակություն է տալիս հանրապետության տնտեսության մեջ օտարերկրյա մասնավոր կապիտալի ներգրավմանը, դրա համար հանրապետությունում ստեղծված է բարենպաստ ներդրումային մթնոլորտ: Այս մասին ասել է ԼՂՀ նախագահ Արկաղի Դուկասյանը՝ մայիսի 6-ին ընդունելով Ռամկավար Ազատական կուսակցության (ՌԱԿ) պատվավոր նախագահ Հայկաշեն Ուզունյանին՝ տիկնոջ հետ, եւ նրանց ուղեկցող ՀՌԱԿ հանրապետական վարչության ատենապետ Ռուբեն Սիրզախանյանին:

Ինչպես հայտնում է ԼՂՀ նախագահի մամուլի քարտուղարի պաշտոնակատարը, Արկաղի Դուկասյանը հատուկ նշել է, որ Լեռնային Ղարաբաղը մեծ հույսեր է կապում հայկական Սփյուռքի հետ, որն ունի ֆինանսաքաղաքական ներուժ՝ ընդունակ արդյունավետ ներգործություն ունենալու Արցախի սոցիալ-տնտեսական եւ մշակութային զարգացման, նրա անկախ պետականության հետագա ամրապնդման վրա:

ԼՂՀ նախագահը ծանոթացրել է հյուրերին Լեռնային Ղարաբաղի սոցիալ-տնտեսական զարգացման հեռանկարներին, հումանիտար ծրագրերի իրականացման գործընթացին:

Հայկաշեն Ուզունյանը իր տպավորություններն է ներկայացրել Ստեփանակերտի արտաքին տեսքի կապակցությամբ, միաժամանակ զարմանք արտահայտելով ռազմական գործողությունների պատճառով ավերված ԼՂՀ մայրաքաղաքի կենցաղային համայնքի վերականգնման ուղղությամբ տարվող աշխատանքների արագ ընթացքի վերաբերյալ:

Թուրք-մեսխեթցիները բնակեցվում են Ախալցխայում

ԱԽԱԼՔԱԼԱՔ, 14 ՄԱՅԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Վկայակոչելով հավաստի աղբյուրները, ԱԽԻՆՖՈՆ տեղեկացնում է, որ ընթացիկ տարում Ախալցխայում, հատուկ հիմնադրամների հաշվին, հայերից գնված տներում, արդեն վերաբնակեցվել է թուրք-մեսխեթցիների 17 ընտանիք, յուրաքանչյուր ընտանիք միջինը բաղկացած է քառասուն անձից: Ընդ որում, այդ վերաբնակիչները հանդես են գալիս վրացական ազգանուններով:

Կանադա-Հայաստան խորհրդարանական պատվիրակությունը Հայաստանում

Արդեն մի քանի օր Հայաստանում էր Կանադա-Հայաստան խորհրդարանական պատվիրակությունը, որի թվում՝ երեք պատգամավոր, երկու սենատոր, երկու նահանգային պատգամավոր: Կանադական խորհրդարանական հանձնախումբը թեև 22 անդամ ունի, սակայն շատ կարեւոր դերակատարություն ունի Հայոց ցեղասպանությունը ճանաչելու խնդրում:

Այցի ժամանակ կայացել են բազմաթիվ հանդիպումներ, որոնք շատ դրական արդյունքներ են տվել, երեկ լրագրողների հետ հանդիպման ժամանակ նշեց Սարգիս Ասատուրյանը: Հանդիպմանը մասնակցում էր եւ լրագրողների հարցերին մանրամասն բացատրություններ տվեց Կանադայում Հայաստանի դեսպան Արա Պապյանը: Ապրիլի 24-ին Կանադայի խորհրդարանում առաջին անգամ գումարվել է նիստ՝ բարձրաստիճան ղեկավարների մասնակցությամբ՝ նվիրված Եղեռնի 87-ամյակին: Կազմակերպիչն էր Սարգիս Ասատուրյանը՝ միակ հայ պատգամավորը խորհրդարանում: Պրն Ասատուրյանի գլխավորած հանձնախումբը ջանք չի խնայում ազգանվեր գործունեություն իրականացնելու, հայ մշակույթի տարածման խնդրում: Վկան անցած տարի քրիստոնեության 1700-ամյակի առթիվ թողարկած (3 միլիոն տպաքանակով) նամականիշները, որոնք ճանաչողական մեծ դեր խաղացին: Մեծ է նաեւ հանձնախմբի աջակցությունը Հայաստանի դեսպանատանը, որն էլ հարգանքով ու երախտագիտությամբ նշեց դեսպան Արա Պապյանը: Այսօր Կանադան Հայաստանում համեմատական կարգով ավելի լավ է ներկայացված: Գրանցված 70 հայ-կանադական ձեռնարկություններ կան, սակայն դրանցից գործում են երկու տասնյակը միայն:

Մեպտեմբերին նախատեսվում են գործարարների փոխայացություններ, որոնք էլ իրենց դրական արդյունքը կտան ու կլրացնեն ներկայումս գործող հայ-կանադական «Գրանտ տորակո», «Իվ Մարտեն» տրիկոտաժի ֆաբրիկայի մասնաճյուղի (ի պատիվ կանադահայ գործարար Հակոբ Ամիրյանի) եւ ոսկերիչների ու աղանամդագործների համատեղ ձեռնարկությունների շարքը:

Իգոր Խալաթյանը միայնակ հաղթահարեց Էվերեստը

ԵՐԵՎԱՆ, 17 ՄԱՅԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Մայիսի 16-ին, Նեպալի ժամանակով ժամը 10-ին աշխարհի ամենաբարձր՝ Էվերեստ լեռնագագաթ միայնակ վերելք է

կատարել ՀՀ քաղաքացի Իգոր Խալաթյանը: Այս մասին Արմենպրեսի թղթակցին հայտնեց Հայաստանի արլինիզմի ֆեդերացիայի նախագահ Հայկ Տոնոյանը՝ հիմնվելով Նեպալից ստացված պաշտոնական հաղորդագրության վրա:

Ի. Խալաթյանն արլինիզմի ազգային ֆեդերացիայի անդամ է, մասնագիտությամբ՝ ծրագրավորող, ներկայումս ապրում է Նյու Ջերսիում (ԱՄՆ): Նա արշավը սկսել էր մարտի 20-ին՝ թույլտվությունը Նեպալի իշխանություններից ստանալով որպես Հայաստանի ներկայացուցիչ:

Նա երկրորդ հայն է, որը հաղթահարել է աշխարհի ամենաբարձր լեռնագագաթը՝ 1999 թվականի մայիսին Լեւ Սարկիսովի վերելքից հետո: Սպորտային աշխարհում Էվերեստ կատարվող վերելքներն ամենաբարձրակարգ նվաճումների շարքին են դասվում եւ համեմատելի են աշխարհի առաջնություններում եւ օլիմպիական խաղերում հաղթանակների հետ:

ՆԱՏՕ-ի պատվիրակությունը Ծիծեռնակաբերդում

ԵՐԵՎԱՆ, 14 ՄԱՅԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Երկօրյա պաշտոնական այցով Հայաստանում գտնվող ՆԱՏՕ-ի խորհրդարանական վեհաժողովի նախագահ Ռաֆայել Էստրելան եւ գլխավոր քարտուղար Մայնոն Լանը մայիսի 14-ին այցելեցին Ծիծեռնակաբերդի Հայոց ցեղասպանության գոհերի հուշահամալիր եւ թանգարան-ինստիտուտ: ՆԱՏՕ-ի ԽՎ պատվիրակությունը ծաղկեպսակ դրեց հուշահամալիրում:

«Սարսափը, ոչնչացումը, մարդկային արարածների միտումնավոր բնաջնջումը, որ ներկայացված է այս թանգարանում, մշտական դաս է պատմությանը եւ երբեք չպետք է կրկնվի: Եղեռնը պետք է մշտապես արմատախիլ արվի մեր իրականությունից», մասնավորապես ասված է Յեղասպանության թանգարան-ինստիտուտի հուշամատյանում Ռաֆայել Էստրելայի գրառման մեջ:

Թուրքիայի ամենահին ընտանեկան բիզնեսի հիմնադիրը հայ է

ԱՆԿԱՐԱ, 8 ՄԱՅԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Պարզվել է, որ Թուրքիայի ամենահին ու խոշոր ընտանեկան բիզնեսը հիմնադրվել է հայերի կողմից Օսմանյան կայսրության մայրաքաղաք Ստամբուլում դեռ 14 սերունդ առաջ, գրում է թուրքական «Սաբահ» թերթը, վկայակոչելով այդ ուղղությամբ արված ուսումնասիրությունները: Ըստ թերթի, դրա հիմնադիրը եղել է Ավետիս Զիլչիյանը, որն իր «որակով ու հարուստ ընտրանիով աչքի ընկնող» գանգերի արհեստանոցը հիմնել է 1623 թ.ին: Նույնանուն ընկերությունը Թուրքիայում գործունեություն է ծավալել մինչև 1929 թ.ը, որից հետո դրա տերերը տեղափոխվել են ԱՄՆ: Այդտեղ ընտանեկան բիզնեսը մասնագիտացած էր հատկապես ջազային նվագախմբերի համար հատուկ զանգեր պատրաստելու մեջ: Արմանդ Զիլչիյանը արդիականացրել է ընկերությանը, իսկ նրա դուստրերը կրկին գործունեություն են ծավալել նաեւ Ստամբուլում:

«Սաբահը» նշում է, որ իր տարիքով այս ընկերությունը զբաղեցնում է 27-րդ տեղն աշխարհում, իսկ ամենահին ընտանեկան բիզնեսը հիմնադրվել է Ճապոնիայում՝ 578 թ.կին Կոնգո Գոմիի կողմից, որի հետնորդները շարունակում են նրա գործը մինչև այժմ:

Թերթը հրապարակել է նաև ամենահարուստ ընտանեկան բիզնեսի ներկայացուցիչների ցուցակը, որի 116 անդամներից չորսը թուրքեր են: Թուրքական խոշորագույն «Բոչ գրուփ»-ը 49-րդն է այդ ցուցակում, «Սաբանջ» հոլդինգը՝ 56-րդը, «Դոդուշ գրուփ»-ը՝ 60-րդը եւ «Գանաթ» բանկը՝ 106-րդը:

Միզապային

Կանադահայ պատգամավոր Սարգիս Ասատուրյանն Ատոմ Եղոյանի «Արարատը» կներկայացնի Կաննի փառատոնում

Թեև ինքը՝ Ատոմ Եղոյանը, հանել է իր վերջին՝ «Արարատ» ֆիլմը Կաննի փառատոնի մրցույթից, սակայն մայիսի 20-ին ֆիլմն արտամրցութային կարգով կներկայացվի փառատոնում: Այս մասին տեղեկացնում է Կանադայի խորհրդարանի միակ հայ պատգամավոր, տեղի Ազատական կուսակցության անդամ Սարգիս Ասատուրյանի գրասենյակը (Օտտավա): Կանադայի մշակույթի նախարար Շելյա Կոպսի կողմից հայ պատգամավորին է տրվել Ատոմ Եղոյանի ֆիլմի ցուցադրության ժամանակ Կանադան ներկայացնելու պատիվը:

Ինչպես հայտնի է, կանադահայ ռեժիսորի այս նոր ժապավենը, որը փաստորեն ֆիլմ է ֆիլմի ներսում, ներկայացնում է 1915-23 թթ.կին Հայոց ցեղասպանության թողած հետեւանքները երիտասարդ մի վարորդի կյանքի եւ մտածելակերպի վրա: Կաննի փառատոնում եւ միջազգային էկրանների վրա «Արարատ» ֆիլմի ներկայացման հեռանկարը աղմկալի մտահոգությամբ էր ընդունվել թուրքական իշխանության եւ հասարակության կողմից:

Ինչ վերաբերում է կանադահայ պատգամավորին, որ իր երկիրը ներկայացնելու է նաև Կանադայի մեկ այլ ռեժիսորի՝ Ջոն Կարպենտերի «Մփայլեր» ֆիլմի ցուցադրության ժամանակ, տարիներ շարունակ Կանադայի խորհրդարանում թե կառավարության մոտ զգալի ջանքեր է ի գործի դնում Հայոց ցեղասպանության ճանաչման ուղղությամբ: Ի դեպ, պրն Ասատուրյանն այս օրերին գտնվում է Հայաստանում: Այս մասին կարդալ մեր 2-րդ էջում:

ԱՄՆ Կոլորադոյի նահանգը ճանաչեց Հայոց ցեղասպանությունը

ԳԵՆՎԵՐ, 8 ՄԱՅԻՄ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Մայիսի 6-ին ԱՄՆ Կոլորադոյի նահանգը ճանաչել է Հայոց ցեղասպանությունը: Ինչպես տեղեկացնում են ԱՄՆ Հայկական համագումարից, Կոլորադոյի օրենսդիր պալատի թիվ 02-022 որոշումը ապրիլի 24-ը հռչակել է «Կոլորադայում Հայոց ցեղասպանության հիշատակի

օր»: Միաժամանակ ԱՄՆ Կոնգրեսին եւս կոչ է արվում դատապարտել Հայոց ցեղասպանությունը: Ընդունված որոշման մեջ նշվում է, որ «հայ ժողովրդի ոչնչացումն ուղեկցվում էր հայկական եկեղեցիների, դպրոցների, գրադարանների եւ մշակութային արժեքների ոչնչացմամբ»: «Մենք շնորհավորում ենք Կոլորադոյի ամերիկահայ բնակիչներին այս նախաձեռնությանն օժանդակելու համար: Ցեղասպանությունը ճանաչող օրենսդիր մարմինների թիվը ԱՄՆ-ում եւ աշխարհում շարունակում է աճել», հայտարարել է ԱՄՆ Հայկական համագումարի Արեւմտյան գրասենյակի տնօրեն Փիթեր Աբաշյանը: Կոլորադոյի նահանգապետները Հայոց ցեղասպանության վերաբերյալ հայտարարություններ էին կատարել դեռեւս 1981, 1986, 1987 եւ 1990 թթ.կին: Ըստ նույն աղբյուրի, Հայոց ցեղասպանությունը ԱՄՆ-ում ճանաչել են 27 նահանգներ՝ Կալիֆոռնիա, Ջորջիա, Ալյասկա, Մերիլենդ, Նյու Յորք, Նյու Մեքսիկո, Մասաչուսեթս, Յուտա, Վիրջինիա, Միչիգան, Վիսկոնսին եւ այլն:

Կանադայի վարչապետի ուղերձը

ՕՏՏԱՎԱ, 23 ԱՊՐԻԼ, ԱՐՄԵՆՊՐԵՄ: Կանադայի վարչապետ Ժան Կրետյենն իր ուղերձն է հղել Կանադայի հայ համայնքին՝ Հայոց ցեղասպանության 87-րդ տարելիցի կապակցությամբ, որում մասնավորապես նշում է, թե «դա մի դժբախտություն էր, որից տուժել է ողջ հայությունը»: «Կանադացիներն անկեղծորեն կիսում են հայերի մեծագույն վիշտը: Օսմանյան կայսրության պատերազմների հետեւանքով նրանցից յուրաքանչյուրը դատապարտվեց դաժան ճակատագրի: Շատերը փրկվեցին, ապաստան գտնելով Կանադայում: Այսօր նրանց, ինչպես եւ նրանց ժառանգների մեծ ներդրումը մեր երկրի զարգացման գործընթացին պարտավորեցնում է մեզ ճանաչել եւ դատապարտել այդ ոճրագործությունը», ասվում է ուղերձում:

Հայկական հուշարձանների ոչնչացումը նույնպես ցեղասպանությունն է

ԵՐԵՎԱՆ, 25 ԱՊՐԻԼ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Հարեւան երկրներում՝ Թուրքիայում, Ադրբեջանում, Վրաստանում հայկական պատմական հուշարձանների վիճակը քննարկվեց Հայկական Ժողովրդային շարժման Հայաստանի ներկայացուցչության հրավերով Հայաստան ժամանած յոթ երկրների խորհրդարանականների եւ քաղաքագետների մասնակցությամբ ապրիլի 25-ին կայացած «Քաղաքակրթությունների մերձեցումը համամարդկային արժեքների պահպանման գրավական» թեմայով սեմինարին:

Սեմինարի մասնակիցներն իրենց զեկուցումներում եւս մեկ անգամ անդրադարձան անցած դարասկզբին Օսմանյան Թուրքիայի կողմից իրականացված Հայոց ցեղասպանությանը, ընդգծելով, որ ներկայումս փաստորեն շարունակվում է ցեղասպանության հաջորդ փուլը՝ Թուրքիայում եւ Ադրբեջանում իրականացվում է հայկական պատմական հուշարձանների ոչնչացման ու յուրացման քաղաքականություն, որի արդյունքում կորստյան են մատնվել համամարդկային արժեք ունեցող հազարավոր պատմական հուշարձաններ:

Թուրքիան դեռևս շարունակում է հերքել 1894-1896 թթ. եւ 1915-1923 թթ. պետականորեն ծրագրված ցեղասպանությունը եւ աշխատում է հայկական հուշարձանների ոչնչացմամբ քողարկել հայ ժողովրդի եւ պետության գոյությունն իր արեւելյան տարածքներում: Արեւմտյան Հայաստանի 2500 պատմամշակութային հուշարձաններից 1915թ.կից հետո կանգուն են մնացել 913 շինություններ, որոնցից, ՅՈՒՆԵՍԿՕ-ի տվյալների համաձայն, 464ը հետագայում լիովին ոչնչացվել է, 252ը՝ վերածվել փլատակների, իսկ 197ը վերականգնման լուրջ կարիք ունեն: Դրանց մեծ մասը դարձել են զինավարժությունների քիրախ:

Ըստ փաստերի, ադրբեջանցիների կողմից 1998 թ. նոյեմբերին ոչնչացվել է խորհրդային տարիներին Ադրբեջանի տարածքում հայտնված Ջուղայի գերեզմանոցի մոտ 3000 խաչքարերի գրեթե 30%-ը: Վրաստանի տարածքում ստալինյան բռնապետության օրոք ավերվել է շուրջ 80 հայկական եկեղեցի:

Ներկաներն ընդունեցին բանաձեւ, ըստ որի, ցեղասպանությունը ոչ միայն էթնիկական կամ կրոնական խմբի ֆիզիկական ոչնչացումն է, այլեւ նրա ազգային ու հոգեւոր մշակույթի ոչնչացումը:

Ջավախքի «Վիրք» կուսակցությունը հավանաբար կբոյկոտի ընտրությունները

Ջավախքում գործող հայկական «Վիրք» կուսակցությունը, որին Վրաստանի արդարադատության նախարարությունը չի գրանցում, եւ որը մոտ օրերս իր հայկական անունը կփոխարինի վրացականով՝ «Ջարի», հավանաբար կբոյկոտի հունիսի 2ևին կայանալիք Վրաստանի տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները: «Վիրքի» առաջնորդներից Դավիթ Ռատակյանը ընտրությունները բոյկոտելու կազմակերպության ցանկությունը պայմանավորել է Վրաստանի «Ընտրական օրենսգրքի» «հակաժողովրդական բնույթով»: «Վիրքը» ընտրություններին մասնակցելու կամ բոյկոտելու վերջնական որոշում կկայացնի եկող մի քանի շաբաթվա ընթացքում: Ռատակյանը «Փրայմ նյուս» գործակալությանն ասել է, որ Վրաստանի հատուկ ծառայություններն ընտրություններից առաջ «հավաքագրում» են թեկնածուներին:

Չինված ընդհարում Ադդամում երկու ոչխարի պատճառով

Ադդամի շրջանի Ահմադաղայի գյուղի բնակիչներ՝ 25 եւ 23-ամյա եղբայրներ Յալչին եւ Սադրը Ադաեւները դաժանաբար ծեծվել են մոտակայքում տեղաբաշխված ադրբեջանական գումարտակի հրամանատարի եւ զինվորների կողմից: Առավոտյան ժամը 6ևին գումարտակի հրամանատարը հովիվ եղբայրներից պահանջել է երկու ոչխար: Յալչինն ընդդիմացել է՝ ասելով, թե կարող է միայն մեկ ոչխար տալ: Հրամանատարը կանչել է գումարտակի քաջարի զինվորներին, եւ սկսվել է հովիվ երիտասարդի ծեծը: Կրտսեր եղբայրը հասել է օգնության, բայց նրան էլ են մի լավ ծեծել:

Այս միջադեպը մեկ անգամ եւս ապացուցում է, որ ադրբեջանական բանակը, ինչպես սիրում է կրկնել

Հեյդար Ալիեւը, մարտական բարձր պատրաստվածության մեջ է:

Թուրք դեսպանն առաջարկում է առեւտրային գրասենյակ բացել Երեւանում

Պաշտոնաթող դեսպան, այժմ Հայաստանի հարցերով փորձագետ Յուսեյ Սոյլեմեզը թուրքական «Ջաման» օրաթերթի մայիսի 14ևի համարում առաջարկում է Հայաստանի եւ Թուրքիայի հարաբերությունների զարգացումն արագացնելու նպատակով Երեւանում բացել առեւտրային գրասենյակ: Ըստ Սոյլեմեզի, եթե նույնիսկ Երեւանի եւ Անկարայի հարաբերությունները չհասնեն դիվանագիտական հարաբերությունների մակարդակի, անհրաժեշտ է ձեռնամուխ լինել երկկողմ տնտեսական կապերի զարգացման գործին: Պաշտոնաթող դեսպանի կարծիքով, առեւտրային շփումների համար առեւտրային գրասենյակը բավարար է: Նա օրինակ է բերում Թայվանը, որին Թուրքիան չի ճանաչել, բայց Չինաստանի կառավարությունը դեմ չէ թուրքերազմային տնտեսական կապերին: Թուրքական «Էքսիմբանկը» կարող է վարկեր տրամադրել հայկական ընկերությունների հետ համագործակցող թուրքական ձեռնարկություններին: Այսպիսով, կարծում է Սոյլեմեզը, Թուրքիան կարող է նվազեցնել Հայաստանի տնտեսական կախվածությունը սփյուռքից:

Շեւարդնաձեն պահանջել է շտապ վերականգնել հայերի տները

ԹԲԻԼԻՍԻ, 15 ՄԱՅԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Վրաստանի նախագահ Էդուարդ Շեւարդնաձեն կառավարության այսօրվա նիստում պահանջել է շտապ կարգով վերականգնել Սուրբ Երրորդության կառուցվող տաճարին հարակից տարածքում հայերով բնակեցված բնակելի տները: Դրանք վնասվել էին վերջին երկրաշարժի ժամանակ: «Եթե այնտեղ թեկուզեւ մի պատ փլվի, դա կարող է վերանել քաղաքական հարցի»,- և հայտարարել է նախագահը «Կավկազպրեսին»: Նա հիշեցրել է հայկական մամուլի այն հրապարակումները, որտեղ հաստատվում էր, որ երկրաշարժի ժամանակ Թբիլիսիում բոլորից շատ տուժել են հայերը:

Թուրքիան եւ Ադրբեջանը ստորագրել են անհատույց ռազմական օգնության պայմանագիր

ԲԱՔՈՒ, 15 ՄԱՅԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Մայիսի 14-ին Ադրբեջանի պաշտպանության նախարար, գեներալ-գնդապետ Սաֆար Աբիեւն ընդունել է Թուրքիայի ՁՈՒ ԳՇ պաշտպանական պլանավորման եւ աղբյուրների ուղղորդման վարչության պետ, բրիգադի գեներալ Ջահանգիր Դումանլիի գլխավորած պատվիրակությանը: Ինչպես հայտնել են ՊՆ մամուլ ծառայությունում, գեներալ Դումանլին նշել է, որ կապերն Ադրբեջանի եւ Թուրքիայի զինված ուժերի միջեւ ընդլայնվել են: Այնուհետեւ ստորագրվել են «Ադրբեջանի կառավարության եւ Թուրքիայի կառավարության միջեւ ռազմական անհատույց օգնության մասին» պայմանագիրը եւ «Ադրբեջանի ՊՆ եւ Թուրքիայի ՁՈՒ ԳՇ միջեւ ֆինանսական օգնության կիրառման մասին» արձանագրությունը:

Շուշին՝ հաղթանակների ցատկահարթակ



Թեպետ մշակութային առումով վերջին հարյուրամյակների ընթացքում Շուշին հասել էր զարգացման որոշակի մակարդակի, անգամ Կովկասի մասշտաբով, սակայն քաղաքական նշանակությամբ եղել է օտար զավթիչների նկրտումների հենակետ:

Արցախի հիմնավորց մայրաքաղաքի կենսագրության ամենաողորմական փուլը, թերևս, սկսվել է 1920 թվականի մարտի 23-ից, երբ մեծամասնություն կազմող հայ ազգաբնակչությունը բռնահամվել է քաղաքից, իսկ Շուշիի հայկական թաղամասը՝ ենթարկվել կողոպուտի ու ավերի: Ավելի քան 70 տարի գտնվելով ադրբեջանցիների ձեռքում, Շուշին վարչական, մշակութային ու առևտրաարհեստագործական կենտրոնից վերածվել էր ազգայնական որջի, որտեղ ծնրադրել էր թուրքմահմեդական գաղափարախոսությունը:

Շուշին իր հայեցի դիմագիծը կորցրեց հատկապես արցախյան շարժման սկզբնատարում՝ 1988-ին, երբ ազերական խաժամուժի զանգվածային անկարգությունները ստիպեցին շուշեցի հայերին սպասատարան փնտրել Ստեփանակերտում եւ մերձակա հայկական գյուղերում: Վերջին հայի արտաքսումից հետո Շուշին դարձավ յուրօրինակ պլացարմ Ադրբեջանի իշխանությունների ռազմատենչ ծրագրերի իրականացման համար: Կարճ ժամանակաընթացքում այստեղ վերաբնակեցվեցին ոչ միայն հազարավոր ադրբեջանցիներ, այլև բնավորվեցին զինված հրոսակախմբեր, որոնք պարբերաբար ավազակային հարձակումներ էին գործում հայկական բնակավայրերի վրա:

1991-ի սեպտեմբերին Շուշիից Ստեփանակերտի վրա արձակված «Ալազան» տիպի առաջին հրթիռները չարագուշակորեն գուժեցին ազերիների բուն նպատակը՝ հրի մատնել Ստեփանակերտը՝ նույնպես արժանացնելով Շուշիի երբեմնի ճակատագրին:

Նորանկախ ԼՂՀ մայրաքաղաքի գլխավերելում նստած վիշապը լուրջ սպառնալիք էր Արցախի պետականությանն ու նրա հետագա գոյությանը:

Երբ Ստեփանակերտից դուրս բերվեց այդտեղ տեղակայված խորհրդային բանակի մոտոհրաձգային գունդը, հրթիռահրետակոծությունները դարձան ավելի ինտենսիվ, իսկ հայկական գյուղերը դարձան ելուզակային ոտնձգությունների մշտական թիրախ:

Վիճակն առավել վատթար էր Ստեփանակերտում: Էլեկտրաէներգիայի, վառելիքի, սննդի ու դեղորայքի պակասը, ինչպես նաև նկուղային պայմանները, որտեղ ապաստանել էր խաղաղ բնակչությունը՝ պաշտպանվելու համար ռումբերից ու հրթիռներից, զոհվելու հավանականությունից բացի, նաև համաճարակի բռնկման վտանգ էին ստեղծել: Կրակե օդակի մեջ առնված Արցախն այլ ելք չուներ, քան պրկել ուժերը եւ ճեղքել պաշարման օղակը: Կենսական անհրաժեշտություն էր դարձել թշնամական կրակակետերի ոչնչացումը:

1992-ի ձմռանը Արցախի ինքնապաշտպանական ուժերը ձեռնամուխ եղան Ջամիլյուի, Մալիբեկյուի եւ Խոջալուի կրակակետերի ոչնչացմանը, որի բարեհաջող իրականացումն ավելի բարձրացրեց հայ ազատամարտիկների մարտական ոգին: Հերթը Ջանհասանի ու Շուշիի կրակակետերինն էր, որոնց վնասագերծումը ռազմական տեսակետից գործնականում դժվար էր: Գրոհի պլանը կազմվեց խելացի ու ճշգրիտ: Հաշվի առնվեց նաև մարտական գործողություններին մասնակցող հայ ազատամարտիկների արիությունը:

Շուշիի ազատագրման գործողությունն սկսվեց մայիսի 7-ին, որն իրականացվեց 4 ուղղությամբ: Առաջին երկու ուղղություններով՝ կենտրոնական ու արեւելյան, հայ ինքնապաշտպանական զորախմբերը պիտի թափանցեին անմիջապես Շուշի, իսկ Ջանհասանի ու Լխսագորի ուղղությամբ հարձակումը նպատակ ուներ գրավել ռազմավարական բարձունքները՝ հակառակորդին մոլորեցնելու եւ հնարավորության դեպքում նրան շրջափակման մեջ առնելու համար:

Հայկական ջոկատների կապակցված գործողությունները հաջողությամբ պսակվեցին: Մայիսի 9-ի առավոտյան մարտերն ընթանում էին Շուշիում: Հակառակորդի դիմադրությունը տարերային էր, եւ արդեն օրվա վերջին Արցախի հիմնավորց մայրաքաղաքը ազատագրված էր:

Լեզենդար **Կոմանդոսի** (Արկադի Տեր-Թադեոսյան) ղեկավարությամբ կազմակերպված Շուշիի փայլուն ռազմագործողության նշանակությունը, կարծում ենք, հետագայում ավելի խորազնին ուսումնասիրման ու գնահատանքի կարժանանա, բայց այսօր կարող ենք իրավամբ փաստել, որ ոչ միայն բեկումնային նշանակություն ունեցավ ազատագրական հաղթարշավի համար, այլև հենց Շուշիում ձեւավորվեց միասնական բանակի ստեղծման գաղափարը: Բանակ, որ կազմավորվեց հայրենասիրաբար տոգորված ֆիդայական կամավոր ջոկատներից եւ կարողացավ արտակարգ պայմաններում միավորել հայ ամրակուռ ոգու բոլոր լիցքերը: Պաշտպանական բանակ, որ դարձավ այսօրվա, թեկուզ փխրուն, խաղաղության հիմնական երաշխավորը: ԼՂՀ կայացման 10-ամյա ժամանակաընթացքում ձեռք բերված մեր բոլոր նվաճումներն անհնար է պատկերացնել առանց պաշտպանական բանակի: Ամեն մի արցախցու կենսագրության մեջ բանակը կա ու կլինի, քանզի ազգի կենսագրության շարունակությունը հենված է հենց ժողովրդի հերոսական անցյալի վրա:

Մայիս ամիսը հայոց բազմադարյա պատմության ընթացքում խորհրդանշել է առավելապես հաղթանակներ: Շուշիի ազատագրումը եւ ԼՂՀ պաշտպանության բանակի ստեղծումը դրա իրական արտահայտությունն են: Փառավորվենք, ուրեմն, Մայիսի 9-ի խորհրդով, ու ազգովին շարունակենք մեր երթը դեպի նոր, ավելի մեծ հաղթանակներ:

ԿԻՄ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ, Ստեփանակերտ

Շուշին ավելին է, քան հաղթանակը

Էջեր ռազմաճակատային օրագրից

Ջորի Բալայան

Յրտերն ընկնելուն հետ Ստեփանակերտը ոչ թե շրջափակված էր, այլ՝ արդեն պաշարված: Առավոտ շուտ փողոց էին ելնում նախ տղամարդիկ, ապա նոր կանայք: Հարկավոր էր հավաքել դիակները: Դեռ 1992-ի հունվարին ԼՂՀ նորաթուխ Գերագույն խորհուրդը որոշում ընդունեց «Խորհուրդ չտալ» (արգելել բայից դեպուտատներս հրաժարվեցինք) գոհվածներին հուղարկավորել բազմամարդ թափորով, քանի որ Ստեփանակերտը գիշերեցերեկ ռմբահարվում էր Շուշիից: Սկսած 1991 թվականի դեկտեմբերից քաղաքի վրա կրակում էին «Ալազան» հակակարկտային սարքավորումներից: Իսկ 1992 թվականի հունվարի 13-ից թուրքազերիները «Գրադ» հրթիռները գործադրեցին առաջին անգամ Շահումյանում: Փետրվարի առաջին իսկ տասնօրյակում սկսվեցին Ստեփանակերտի սիստեմատիկ գնդակոծումները Շուշիից: Ամեն մի հրթիռահրեշ մի վիթխարի սիգար էր՝ երեք մետր երկարությամբ եւ 100 կգ կշռով: Այն ոչ միայն ավերում էր իր ճանապարհին ամեն ինչ, այլեւ՝ հրկիզում: Ամեն մի համազարկը մահաբեր քառասուն հրթիռ էր: Գիշերը՝ ասես գիսաստղ երկնքում: Օրական՝ ավելի քան հարյուր համազարկ: Թիրախը միայն Արցախի մայրաքաղաքը չէր: Պահեր էին լինում, որ ես սեւ ծխի միաժամանակ վեր ելնող սյուներ էի տեսնում քաղաքի շրջակայքում եւ հեշտությամբ որոշում բնակավայրերը, Շոշն է, Քարինտակը, Կարմիրը, Նորագյուղը, Ասկերանը եւ այլն:

Ու այդ բոլորը՝ Աստծո տված ամեն օր: Իմանալի՜ն իմ նախնիները, որ թաղված էին Շուշիի երկու մեծ եւ երկու փոքր գերեզմանոցներում, թե երբեւէ Արցախի հին մայրաքաղաքը գիշերեցերեկ մահ է սփռելու իր շուրջը: Թե դառնալով Հայաստանի մշակութային կենտրոններից մեկը, ամբողջապես վերածվելու է կրակակետերի եւ գուգորդվելու է չարիքի հետ: Թե մենք այլընտրանք չենք ունենալու, քան գրավել Շուշիի բերդը:

Ամեն առավոտ, նախքան Կոմանդոսի շտաբ մեկնելը, որ գտնվում էր նախկին ավտոբազայի շենքում, ես մորս վերցնում էի նկուղից եւ ուղեկցում տուն: Նա հաճախ էր կատակում. «Ամեն անգամ ասես գալիս ես երեխայիդ մանկապարտեզից տուն տանելու»: Նրա անձնագրում նշում կար, որով միշտ հպարտանում էր. «Ծննդավայրը՝ ք. Շուշի»: Գիշտ է, նա, իր արտահայտությամբ, «հարյուր տոկոսանոց շուշեցի» չէր: Մորական տատիս ծննդաբերական դժվարություններ ունենալու պատճառով Քյաթուկ գյուղից տեղափոխել էին Շուշի, որտեղ հարազատներ ունեինք: Մորս հարազատները օգնելու հնարավորություններ շատ են ունեցել: Նրա հայրը՝ Դավիթ Յուզբաշյանը, Յուզբաշի մելիքների տոհմից է եղել, չորս եղբայրներով խոջա տիտղոս են ունեցել (պարսկերեն՝ «պարոն»), հարգարժան տիտղոս, որ տրվում էր արքունի բարձրաստիճանավորներին ու



վաճառականներին: Եվ Յուզբաշյան բոլոր եղբայրները 19-րդ դարի վերջին եւ 20-րդ դարի սկզբին տուն եւ կալվածքներ են շինել Քաղքար գետի հովտում: Շուտով մարդիկ ի պատիվ խոջա եղբայրների՝ փոքրիկ ավանը կոչել են Խոջալու: Մայրս պատմում էր, թե ինչպես, արդեն տառապելով ԳՈՒԼԱԳՆՈՒՄ, հաճախակի էր հիշում քեռիներիս տները Խոջալուում եւ Շուշիում: Ընդ որում, ճշտում էր նա. «Շուշիի տները խորհրդային տարիներին հող ու մոխիր դարձրին, իսկ Խոջալուի տներում կուլակաթափումից հետո ազերիներն ապրեցին: Դեռ մանկուց եմ անցել հազար ու մի մղձավանջի միջով, այնպես որ հիշելու շատ բան կար, բայց ամենից շատ աչքերիս առաջ հառնում էին հրկիզված ու իլված մեր տները»:

Մորս մտքովն անգամ չէր կարող անցնել, թե տասնամյակներ հետ Խոջալուում ու Շուշին չարաղետ կրակակետեր են դառնալու, որոնցից անընդմեջ գնդակոծելու են Ստեփանակերտը: Հաճախ եմ ինձ բռնել այն մտքի վրա, թե մի տեսակ հարմար չէ, որ մորս ներկայությամբ թուղթ ու գրիչ վերցնեմ ու գրի առնեմ նրա խոսքերը: Բայց հարմար պահ ընտրելով, այնուամենայնիվ, թարգմանեցի գրի էի առնում: Ահա այսօր էլ, դեռ թարմ հիշողությամբ ուզում եմ գրել. «Գիտե՞ս, ճամբարային բոլոր տարիներին ես, մեղմ ասած, մի տեսակ տհաճությամբ էի մտաբերում Ստեփանակերտը, որի հետ են առնչվում իմ բոլոր աղետները: Բայց ահա արդեն քանի ամիս հետեւում եմ նկուղներում ապրող ստեփանակերտցիներին եւ ապշում նրանց արիության ու տոկունության, նրանց հայրենասիրության ու համբերության վրա»: Նախորդ օրը մայրիկը խոսելով իր

տպավորությունների մասին, մի տեսակ շնչակտոր ու հուզմունքով պատմեց, ինչպես ասաց, իր հայտնագործությունը. «Երկնքից անվերջ կրակ է թափվում, հողը երերում է ոտքիդ տակ, շուրջդ խոսակցությունները միայն հացի ու դազադի մասին են, առջեւում լիակատար խավար է ու անորոշություն, բայց ոչ մեկը չի տրտնջում, չի նվնվում, չի մտածում գլուխն առնի ու հեռանա այս դժոխքից: Առավոտները նկուղը կարգի են բերում, տղամարդիկ սավիրվում են, կանայք շրթունքներն են ներկում, երեխաները տափկնոցի են խաղում: Բոլորը հավատում են, որ Շուշին կգրավենք: Հավատն ավելի ամրացավ, երբ մերոնք գրավեցին Խոջալուն: Հավատը դրանից հետո մի տեսակ քաղցրացավ: Հենց միայն այդ հավատի համար բոլոր այդ «նկուղայիններին» հարկավոր է հաղթանակից հետո շքանշաններ տալ»:

Մի ժամ հետո մորս այդ խոսքերը պատմեցի Կոմանդոսին, որը բավական անտարբեր ընդունեց: Միայն երեկոյան, իր պատիվի աշխատասենյակում նա ասաց. «Ես ամբողջ օրը մտածել եմ Գոհար մորաքրոջ խոսքերի մասին եւ հանգել եմ, ես կասեի, ռազմավարական եզրակացության. ստեփանակերտցիները կամավոր տեղավորվելով նկուղային դժոխքում, մեզ հասկացնում են, որ եթե չվերացնենք Շուշիի կրակակետերը, թշնամին մեկ ամսվա մեջ կոչնչացնի բոլորին: Ուրեմն՝ միայն հաղթանակ: Ուրիշ ելք չկա»:

Շուշի: Բանաստեղծներից ոմանք այն արծվաբնի հետ են համեմատել, որ շինված է ժայռի կատարին: Ոմանք՝ արագիլի բնի հետ, որտեղից ամբողջ շրջակայքը երեւում է ինչպես բոխ մեջ: Բժիշկները քաղաքը համարել են հազվադեպ առողջարան, շռայլորեն հիշատակելով Մարիետա Շահինյանի խոսքերը. «Օղը առողջարար է: Կլիման մեղմ է եւ շնորհիվ քնքուշ, անվնաս խոնավության ու նուր մառախուղների՝ ավելի շուտ ծովային կլիմա է, քան ցամաքային»: Ռազմավարները նրանում տեսել են Աստծո ստեղծած ամրոց: Քաղաքը տեղադրված է կտրտված մակերեւույթով սարահարթի վրա: Մարահարթն էլ ասես հատված բուրգ լինի: Հարավարեւելյան կողմը ծովի մակերեւույթից ամենաբարձր կետում 1600 մետր է, հյուսիսայինը՝ 1300: Այնպես որ հյուսիսային բլուրներից մեկի վրա տեղակայված հրամանատարական կետից իրականում քաղաքի բոլոր շինությունները, հատկապես՝ կիսավեր Դազանչեցոց տաճարը, երեւում են ինչպես ափիդ մեջ:

Մենք հավատում էինք, որ Շուշին անպայման կազատագրենք հենց միայն այն պատճառով, որ փոքրից մեծ՝ բոլորը հաստատ գիտեին՝ ուրիշ ելք չկա. մենք պարտավոր ենք հաղթել: Հավատում էին: Թեեւ հաստատ գիտեին, որ բոլոր ժամանակներում ամբողջ համարվել է անառիկ: Կատակ քան է. մի կողմից կլիմետրանոց կախված ժայռն է, մյուս կողմից՝ գառիթափ պատը եւ կրկին խոր անդունդ: Մեքենաներով ու զրահա-տեխնիկայով կարելի է մոտենալ միայն երկու ճանապարհով: Հյուսիսից՝ Ստեփանակերտից, հարավից՝ Լաչինից, որ գտնվում էր ազերիների ձեռքին: Ստեփանակերտից կարելի է Շուշի հասնել միայն մարտերով՝ հաղթահարելով ականապատ արգելափակոցները եւ ճակատ առ ճակատ զնալով հակառակորդի տանկերի դեմ:

Արկադի Տեր Թադեոսյանի աշխատասենյակում ես երկար զննում էի Շուշիի օպերացիայի շտաբային քարտեզը: Կարմիր ֆլումաստերով գծված չորս խոշոր սլաքները ներկայացնում էին չորս հիմնական ուղղությունները. Ջանհասանի, Կենտրոնական, Շուշի եւ Լիսազորի: Օժանդակ ուղղությունները խորհրդանշող՝ Շուշիին ուղղված երկու փոքրիկ սլաքներ էլ կային՝ քարինտակյանը եւ հայբայիյանը:

Շուշիի ազատագրումից մեկ օրուգիշեր հետո արդեն Բաքվի հեռուստատեսության հաղորդավարները գլուխները բռնած՝ կոկորդով մեկ գոռում էին, թե իրենց դավաճանել են, թե աղբյուրներից հրամանատարները անցել են հայերի կողմը: Չարմանալի ոչինչ չկա, չէ որ մանկուց նրանց գլուխն են մտցրել, թե հայերին կարելի է մերկ ձեռքերով էլ հաղթել, թե մենք մագոխիստներ ու լալկաններ ենք: Նրանց մտքի ծայրով իսկ չի անցնում, թե ճշմարտությունը կոնկրետ է, որ Շուշին ազատագրել են ոչ միայն ռուս եւ կամքի ուժով, այլեւ՝ գիտությամբ: Եվ դա շատ կարեւոր է՝ գիտությամբ:

Ժամանակին կուսակցության քաղկոմի համար նախատեսված շենքում ԼՂՀ-ի ինքնապաշտպանության բանակի շտաբը տեղավորվել էր, իմ խոսքերով ասեն. «Ռազմաճակատի հրամանատարության եւ բոլոր ուղղությունների հրամանատարների կապը կողորհնացնող կենտրոնը»: Կենտրոնը ղեկավարում էր Սերժ Սարգսյանը՝ ամբողջ չորս տարի գոյատեւած արցախյան ընդհատակի լիդերներից մեկը: Այդ օրերին քչերը գիտեին, որ բոլոր կետերից, այդ թվում նաեւ Երեւանից ստացվող բոլոր տեղեկությունները նախ ստանում էր Սերժը՝ կապի կենտրոնում: Հիշում եմ: Շուշիի օպերացիան սկսելուց մի քանի օր առաջ Սերժը շտապ թռավ Երեւան, ու ես չէի կարող չնկատել, թե Կոմանդոսն ինչպես է հուզվում: Հազարավոր հարցեր են պետք լուծել նախքան օպերացիան սկսելը: Լուծել գրագետ, լուծել իսկապես գիտականորեն, որ պատմության մեջ է մտել Սուվորովի մատուցմամբ, որպես «հաղթելու գիտություն», եւ միշտ չէ, որ հնարավոր էր Երեւանի հետ հարցերը լուծել կապի միջոցներով: Դրա համար էլ հաջորդաբար թռչում էին մեկ Ռոբերտը, մեկ Սերժը: Իսկ օպերացիայի նախօրեին ես ծոցատեղիս մեջ նշեցի. «Կոմանդոսը հաճախ է մռայլ լինում: Ես տեղյակ եմ, որ նա տառապում է հիպերտոնիկ հիվանդությամբ եւ հաճախ է գլխացավ ունենում: Դեղորայքը չի օգնում: Միայն՝ ցերեկային քունը: Թեկուզեւ մեկ ժամ: Թեկուզեւ կես ժամ: Շտաբում, պատերազմական պայմաններում նման ոչ բարդ մեթոդով ու միջոցներով բուժելու հարմարություններ չկային: Եվ հաճախ նա կես ժամը քնում էր մորս մոտ, որն անմիջապես բակ էր դուրս գալիս, որ երեխաները չաղմկեն: Այդ օրը Արկադին գրկված էր իր սովորական բուժման միջոցից օգտվելու հնարավորությունից: Այնուամենայնիվ, նրա տրամադրությունը բարձր էր: Աչքերը փայլում էին անսովոր ուրախությամբ: Ես հարցրի նրան՝ հո չի՞ սիրահարվել: Ի պատասխան նա ծափ զարկեց եւ բավարարված ձայնով պատասխանեց. «Սերժը վերադարձել է Երեւանից: Գործը հեշտացավ: Սերժիկը եկել է: Միրոս թեթեւացավ»:

Հայոց ցեղասպանության հարցում Թուրքիայի ժխտողականությունը մնում է անփոփոխ

ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ Է ԵՆԹԱՐԿՒՈՒՄ ԹՈՒՐԿԱԿԱՆ ԿԵՂԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՎՈՒՅՑ ԶԱՔՐՅԱՆ

Թուրքիան հետեւողականորեն ժխտում է Հայոց ցեղասպանության պատմական իրողությունը: Ժխտման համար մատնացույց էին արվում թուրքական պետության տարածքում բնակվող մի քանի տասնյակ հայեր, պատճառաբանելով, թե ցեղասպանության պարագայում ինչպե՞ս են նրանք ողջ մնացել: Իսկ կոտորածներն անմիջականորեն վերագրվում են հայերի դավաճանությանը, որպեսզի արդարացվեն դրանք: Ինչ վերաբերում է ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացին, ապա թուրքական իշխանությունները դրան հիվանդագին հակազդեցություն են ցուցաբերում եւ համարում Թուրքիայի նկատմամբ դավադրության դրսեւորում:

Ժամանակին արձագանքներ են եղել ինչպես ժխտողականության, այնպես էլ գործընթացը կանխարգելիչ նախահարձակ միջոցներով կասեցնելու թուրքական միտումների մասին: Պարզապես ասենք, որ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի կասեցումը թուրքերի տեսանկյունից անմիջականորեն պայմանավորված է ժխտողական դիրքորոշման հիմնավորումով: Դա իր հերթին պայմանավորում է Հայոց ցեղասպանության թուրքական կեղծարարությունը, այսպիսով դա դառնում է ցեղասպանության հարցում Թուրքիայի դիրքորոշումը գիտականորեն հիմնավորելու թերեւս միակ միջոցը:


Հարկ է, սակայն, նշել, որ ժխտողական դիրքորոշման պարագայում կարեւորը սոսկ միջոցը չէ, այլ դրա արդյունավետ օգտագործումը: Դա ենթադրում է կեղծարարների պետական հովանավորությունը, իսկ Թուրքիան ոչ միայն հովանավորում է, այլև գիտական, քաղաքական եւ հասարակական նախաձեռնություն է ցուցաբերում, կազմակերպում է տարբեր միջոցառումներ, ապահովում դրանց սփյուռքահայ որոշ գիտնականների մասնակցությունը, հրատարակում է ինչպես թուրք, այնպես էլ օտար հեղինակների միտումնավոր աշխատությունները:

Դրանք լույս են տեսնում ոչ միայն Թուրքիայում, այլև դրա սահմաններից դուրս: Հայոց ցեղասպանության թուրքական կեղծարարությունը հիմնավորելու հարցում առանձնակի ակտիվությամբ աչքի է ընկնում ամերիկյան պատմագրությունը: Եթե դրա ներկայացուցիչներից Հի Լայնը, Հիթ Լատրին, Ջասթին Սկքարթին եւ այլք ճանապարհ են հարթում թուրքերի համար, որպեսզի վերջիններս կեղծարարությունը, իբրեւ պատմական ճշմարտություն, միջազգային ասպարեզ դուրս բերեն, ապա ֆրանսիացի թուրքագետ Ռոբեր Մանթրան եւ

իսրայելցի թուրքագետ Իցիահ Ֆրեյդմանը Թուրքիային մատնանշում են Հայոց ցեղասպանության պատմական բեռը թոթափելու ուղիները:

Մանթրան, պատասխանելով թուրքական «Թեմփո» շաբաթաթերթի հարցերին, դրա 1998 թ. հունիսի 25-ի համարում Անկարային առաջարկում է հավասարապես ընդունել հայկական եւ թուրքական կոտորածների իրողությունը: Ապա նա խելք է սովորեցնում, ասելով. «Չպետք է հերքել կոտորածների փաստը, այլ ասել, որ կոտորածներ եղան, բայց թուրքերն էլ կոտորվեցին»: Ինչ վերաբերում է Ֆրեյդմանին, ապա նա «Աքսիյոն» շաբաթաթերթի 1998 թ. հունիսի 20-ի համարում, ընդգծելով հայերի նկատմամբ անձնական հակակրակները, թուրքերի ուշադրությունը հրավիրում է վերջիններիս «կատարած» կոտորածների վրա, ապա բառացի ավելացնում. «Հայերն իրենց թուրք հարեւանների նկատմամբ, որոնց հետ դարեր շարունակ համատեղ գոյակցել էին, բռնությունների դիմեցին եւ կատարեցին չարագործություններ: Էնվեր փաշան, վերագրավելով երկրի հայաբնակ շրջանները, ինչ խոսք, վրեժ լուծեց: Բայց եւ այնպես, հայերին չեն մորթել»:

Ըստ երեւույթին, Մանթրայի խորհմաստ առաջարկությունն ու Ֆրեյդմանի արժեքավոր խորհուրդը տեղ են հասել, որ վերջին տարիներին թուրքերն սկսել են ոչ այնքան հայկական կոտորածները հերքել, որքան երեւան հանել «թուրքերի նկատմամբ հայերի կատարած եղեռնին» առնչվող փաստեր: Ուրեմն Հայոց ցեղասպանության հարցում Թուրքիայի ժխտողականությունը մնում է անփոփոխ, պարզապես փոփոխության է ենթարկվում թուրքական կեղծարարությունը, իսկ դրա հիմքում դրվում են «հայերի գազանությունների» մասին տարաբնույթ հրատարակությունները:



Թուրքական արխիվների բացման հայտարարությունները կեղծիք են

Դրա վկայությունը «Տեղեկություն ձեռք բերելու իրավունքի մասին» օրենքն է

Թուրքիան Հայոց ցեղասպանության հարցին հիվանդագին մոտեցում է ցուցաբերում: Հարցի չեզոքացման հրամայականը ստիպում է նրան կեղծիքի դիմել: Սակայն կեղծարարությունը բախվում է Ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացին: Թուրքական իշխանությունները, «Միություն ընդդեմ ցեղասպանության» կազմակերպության նախագահ Ալի Էրթեմի դիպուկ արտահայտությամբ, հետզհետե համոզվում են, որ «արեւը չի կարելի ցեխով ծածկել»: Դա նրանց հանում է հավասարակշռությունից: Այս պայմաններում նրանք ցեղասպանության հարցին իրենց մոտեցումը վերանայելու դիմաց կեղծարարության ձեւն ու բովան-

դակուքյունն են փոխում եւ ամեն կերպ փորձում դրա մեջ ներգրավել սփյուռքահայ գիտնականներին:

Հայոց ցեղասպանության թուրքական կեղծարարության նորահայտ ձեւի եւ նոր բովանդակության առումով հատկանշականը ս. թ. ապրիլի 24-ի նախօրեին Թուրքիայում «հայկական անհիմն պնդումների դեմ» ձեռնարկված գրոհի բնույթ կրող հակաքայլերն են: Դրանցից կարելի է առանձնացնել հայկական հարցը դպրոցական ծրագրերում ընդգրկելու եւ համապատասխան դասագրքերի պատրաստումը Ազգային անվտանգության խորհրդի գլխավոր քարտուղարության փորձագետներին հանձնարարելու Թուրքիայի պետական ատյանների որոշումը: Ինչի մասին ապրիլի 12-ի համարում տեղեկացնում էր «Ալօսը»:

«Ալօսին» ապրիլի 19-ի համարում լրացրեց «Չամանը», նշելով. «Վարչապետարանին առընթեր հատուկ խումբն արխիվային փաստաթղթերի հիման վրա բացահայտեց, որ հայ ավազակախմբերն Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին 518 հազար 105 թուրք են սպանել: Թուրքիայի եւ Ադրբեջանի արխիվներում պահպանվող 89 փաստաթղթերն ամփոփվել են երկհատորյա աշխատության մեջ»: Ըստ «Չամանի», Անկարայում Թուրքիայի պետական արխիվների գլխավոր վարչության շենքում կազմակերպվել է փաստաթղթերի ցուցադրումը, եւ դրա առնչությամբ Մարմարա խմբի ռազմավարական եւ սոցիոլոգիական հետազոտությունների հիմնադրամը հենց ապրիլի 19-ին հանդիպում է հրավիրել:

Հանդիպմանը հետեւել է մարտի 20-21-ին Անկարայում Եվրասիական ուսումնասիրությունների կենտրոնին կից գործող Հայկական հետազոտությունների ինստիտուտի կազմակերպած «Հայագիտական ուսումնասիրությունների թուրքական կոնգրեսը»: Եթե կոնգրեսին, ինչպես այդ մասին ապրիլի 26-ի համարում նշում է «Ալօսը», հրավիրվել է 120 պատվիրակ, այդ թվում՝ ԱՄՆ-ից, որոնք շուրջ 100 զեկուցում են կարդացել, ապա հանդիպմանը մասնակցել են պաշտոնաթող թուրք գեներալներ, նահանգապետներ, Թուրքիայի նախկին դեսպաններ, թուրքական ներքին եւ արտաքին գործերի նախարարությունների բյուրոկրատներ, ինչպես նաեւ Պետական արխիվների գլխավոր վարչության պետ Յուսուֆ Մարընայը:

Հանդիպումը վարել է հայտնի քաղաքագետ պրոֆ. Հասան Քյոնին, որտեղ Մարընայի հետ ելույթ է ունեցել Թուրքիոյ հայոց պատրիարք Մեսրոպ Բ. Մութաֆյանը: Հայոց ցեղասպանության հարցին Թուրքիայի հիվանդագին մոտեցումը հիմք է տալիս ենթադրելու, որ թուրքական դպրոցներում հայկական հարցի ուսուցումը ընթանալու է թուրքերի նկատմամբ հայերի կատարած «եղեռնը» ուսուցանելու ուղղությամբ, ապա այդ եղեռնի մասին վկայող «փաստաթղթերի» ցուցադրումը Պետական արխիվների գլխավոր վարչության շենքում կանխորոշել է ինչպես հանդիպման, այնպես էլ Կոնգրեսի աշխատանքների ընթացքը: Այսպիսով, Թուրքիան սկսել է ի լուր աշխարհի աղաղակել. «Մենք մեր արխիվները բացում ենք, իսկ հայերը՝ ոչ»: Այս առումով պատահական չէր Կոնգրեսի եզրափակիչ հայտարարության «գիտական ուսումնասիրությունների նպատակով հայկական

արխիվները բացելու» Հայաստանին հասցեագրված կոչը:


Հայկական արխիվները փակ չեն, հետեւաբար բացելու մասին կոչերը որպես թուրքական խորամանկության դրսեւորում, այլ երկրների գիտական շրջանակներին ապակողմնորոշելու նպատակ են հետապնդում: Ինչ վերաբերում է իր պետական արխիվները բացելու Թուրքիայի հայտարարություններին, ապա դրանք ընդամենը կեղծիք են: Համոզվելու համար կարելի է անդրադառնալ «Ռ-ադիկալ» թերթի 1998 թ. հուլիսի 10-ի համարին, որտեղ «Մի՞թե օսմանյան արխիվները պետական գաղտնիք են» խորագրի տակ փորձ է արվում վերլուծել թուրքական նոր օրենքի (որն այդ պահին նախագծի տեսք ուներ) «Պետական գաղտնիքի» մասին 35-րդ հոդվածը եւ դրա ձեւափոխումն անմիջականորեն պայմանավորում է Հայոց ցեղասպանության շուրջ ծավալվող բանավեճերի աշխուժացմամբ:

Ըստ «Ռ-ադիկալի», հոդվածի առաջին պարբերությունում բառացի նշվում է. «Քաղաքացիների տեղեկություն ձեռք բերելու իրավունքը չի տարածվում պետական գաղտնիքի բնույթ կրող եւ գաղտնիության աստիճանը վարչապետարանի որոշմամբ կանոնակարգվող այն գիտելիքների եւ փաստաթղթերի հետ, որոնց բացահայտումն ակնհայտ վտանգ է ներկայացնում պետության ապահովության, նրա արտաքին հարաբերությունների, ազգային անվտանգության ու պաշտպանության համար, նախահանրապետական շրջանին վերաբերող օսմանյան արխիվների վրա»:

Ակամա հարց է ծագում, եթե տեղեկություններ ձեռք բերելու իրավունքի մասին օրենքով պետական գաղտնիք են համարվում օսմանյան արխիվները եւ դրանց դեմքերը փակվում են նույնիսկ թուրք գիտնականների առջեւ, ապա արխիվների բացման կեղծիքը ի՞նչ նպատակ է հետապնդում: Ըստ երեւույթին, նպատակը հայ գիտնականների հետ «այսպես կոչված Հայոց ցեղասպանության պնդումները» համատեղ քննարկելն է, որպեսզի «պնդումների սնանկությունն» ապացուցելիս նրանք ապացուցման մասնակիցը դառնան: Ինչպե՞ս, Հայոց ցեղասպանության հարցը թուրքերի նկատմամբ հայերի կատարած «եղեռնին» առնչվող նյութերի վրա ուսումնասիրելով:

Հարկ է սակայն նշել, որ այդ նյութերը եւս օրենքով պետական գաղտնիք համարվող օսմանյան արխիվներում են գտնվում: Ուրեմն, «Տեղեկություններ ձեռք բերելու իրավունքի մասին» օրենքը թերի է: Քանի որ թերիությունը ենթադրում է խախտում, այդ իսկ պատճառով թուրքերը «արխիվների բացման» հայտարարություններով եւ օրենքն են շրջանցում, եւ թե օտարերկրյա՝ հատկապես հայ գիտնականներին արխիվային նյութեր ուսումնասիրելու հնարավորությունից չզրկելու համար այդ նյութերն օրենքի խախտման գնով դուրս են բերում օսմանյան արխիվներից:

ՀԱՄԱՐ ԶԱՔՐՅԱՆ



Կարգազրոյց Թեհրանի Հայոց Թեմական Խորհրդի նախագահուհի՝ դոկտ. Այիդա Յովհաննիսեանի հետ

Լոյս.- Նախ թոյլ տւեք շնորհակալութիւն յայտնել Ձեր թանկագին ժամանակը մեզ տրամադրելու համար:



Կը խնդրենք բացատրել ներկայ Թեմական Խորհրդի առանցքային աշխատանքների եւ կարեւոր իրադարձութիւնների մասին, որոնք տեղի է ունենում նրա ժողովներում, նաեւ դրանց առնչուող որոշումների վերաբերեալ:

Պ.- Ընդհանրապէս գիտե՞ք, որ ԹԽ աշխատանքները բաւական ընդարձակ են: Հաւանաբար նախքինում այդպէս չի եղել, բայց վերջին երեւի երկու տասնամեակների ընթացքում, պայմանների եւ մեր հասարակական կառոյցի բերումով աստիճանաբար աշխատանքները աւելի են ընդարձակել օրինակի համար՝ ասենք աւելի կարիքատու ընտանիքների օժանդակելու խնդիրը, որ նախապէս յանձնուած է եղել բարեգործական ընկերութիւններին, այսօր պայմանների բերումով որոշ չափով ներառուած է ԹԽ աշխատանքների մէջ: Այնուամենայնիւ աշխատանքները ընդհանրապէս կարելի է ասել մեր շրջանում մի քանի որոշակի առանցքային հարցերի շուրջ են կենտրոնացել: Կարեւոր հարցերից մէկը՝ մեր դպրոցների եւ ընդհանրապէս կրթական ընդհանուր դրացքն է: Փորձում եւ փորձել ենք, որ լաւագոյնս մեր ուժերի եւ հնարատրութեանների սահմաններում, դպրոցներում ստեղծել հայկական մթնոլորտ, ըստ հնարատրին օգտուելով մայ ուսուցիչ-ուսիներից: Եւ այժմ պետութեան կողմից մեզ տրամ թոյլտութեան համաձայն նաեւ այնտեղ, որ հնարատու է օգտում ենք հայ տեսուչ-ուսիներից եւ փոխտեսուչ-ուսիներից, որոնցով յոյս ունենք աւելի հնարատու դառնայ հայկական մթնոլորտ ստեղծել:

Մեր դպրոցներում, դրա կողքին աշխատանք է տարւել եւ տարւում է ուսուցիչների պաշտօնականացման գծով, որովհետեւ վերջերս որոշում է ընդունել ըստ որի հայ եւ այլ փոքրամասնութիւններին պատկանող ուսուցիչներն էլ կարող են պաշտօնականացնել, թէեւ սահմանափակ թով, բայց մեր աշխատանքը տանում ենք, որպէսզի կարողանանք գոնէ դա անել, հիմնականում առաւել եւս թէ ուսուցիչներին ապահովելու, եւ թէ, յատկապէս ապահովելու ապագայի մեր դպրոցներում հայ տեսուչ եւ հայ փոխտեսուչ ունենալու հնարատրութիւնները, եւ ընդհանրապէս բարձրացնելու մեր դպրոցների կրթական մակարդակը, նորից կրկնում են ըստ հնարատրի, որովհետեւ մենք վերջապէս որեւէ հայ աշակերտի ինչքան էլ, որ նա թոյլ լինի չենք կարող մեր դպրոցներում չնդունել:

Դրա կողքին նաեւ մի շարք շինարարական աշխատանքներ ենք կատարում: Կառուցում ենք Աւետիսեան Բուժարանը, նախկին Շանթ դպրոցի նոր շէնքը, որ կը կոչւի Մարիամեան, որովհետեւ օգտում ենք Մարիամեան շէնքի վաճառքի հասոյթից: Այդ դպրոցի կողքին կը

կառուցւի մի նոր դպրոցի շէնք, որովհետեւ տեղաշարժի պատճառով Մաջիդի թաղամասում հիմա աւելի շատ աշակերտութիւն ունենք եւ պէտք է, որ այդ աշակերտութեանը բաւարարենք: Այդ երկրորդը հաւանաբար կը կոչւի «Շանթ»:

Հ.- Եթէ կարելի է բացատրեք ներկայ ԹԽ եւ նախկին ԹԽ միջեւ ի՞նչ տարբերութիւններ էք տեսնում: Արդեօք գոյութիւն ունե՞ն նոր մօտեցումներ:

Պ.- Վերջին հաշուով ամէն ԹԽ նախ ժառանգորդն է այն ինչի, որ նախորդ ԹԽ են արել, եւ դրական եւ բացասական իմաստով: Ամէն պարագային նախորդ ԹԽ տարած աշխատանքի բերումով մեզ համար այսօր հնարատու է դարձել ձեռնարկել մի շարք աշխատանքներ: Նախկինում օրինակի համար անգամներ ծրագրւել էր Բուժարանի փոխադրումը մի աւելի հայաշատ թաղ, մենք այս շրջանում յաջողեցինք դա անել: Դպրոցների կառուցման աշխատանքը մի կարճ ժամանակ առաջ ծրագրւել էր արդէն, որը կարողացանք իրականացնել: Երկու դպրոցների կառուցումից յետոյ յոյս ունենք, որ մեր ծառայութեան ժամանակաշրջանում կը կարողանանք նաեւ իրականացնել տիկ. Հ. Ֆէրահեանի կտակը՝ վերակառուցելով «Մասունիկ» մանկապարտեզի շէնքը եւ վերանսանելով այն յարգելի տիկնոջ անունով: Փորձում ենք մի քիչ աւելին օժանդակել նիւթական աննպաստ պայմաններում գտնուող հայ ընտանիքներին: Հնարատրութիւն ենք ստեղծել մարմնամտային խանգարումով երեխաների համար հիմնելով «Ակունք» կենտրոնը, որի աշխատանքը ընդարձակուած է:

Բայց որ ամէնից կարեւորն է՝ եւ կարծում են ստեղծել ենք այն ինչ-որ նախորդ ԹԽ երեւի փորձել են, բայց ինչ-ինչ պայմանների բերումով հնարատու չի եղել դրանց իրականացնել: Շարունակական եւ ամիսը մէկ հաղորդագրութիւններով փորձում ենք ժողովրդին տեղեակ պահել այն աշխատանքների մասին, որոնք ընթացքի մէջ են:

Լոյս.- Յատր «Լոյսը» չի ստացել որեւէ հաղորդագրութիւն:

Պ.- Հաղորդագրութիւնը տրւել է «Ալիք» օրաթերթին: Հիմա մտածել ենք սրանից յետոյ նաեւ բազմացնել եւ փակցնել եկեղեցիների եւ միութիւնների պատերին՝ ժողովրդին առաւել իրազէկ պահելու նպատակով:

Լոյս.- Չէ՞ք ցանկանայ, որ նաեւ մեր թերթի միջոցով ընթերցողը հաղորդակցւի այդ աշխատանքներին:

Պ.- Ես ոչ մի պատճառ չեմ տեսնում, որ պարզապէս չլինի: Բնականաբար «Ալիքը» լինելով օրաթերթ, տարբերում է միւս մամուլից, բայց որեւէ արգելք կամ պատճառ չեմ տեսնում, որ միւս թերթերն էլ կամ «Ալիքից» չընդօրինակեն, կամ հաղորդագրութիւններն չստանան Առաջնորդարանից:

Հ.- Ոմանք այն կարծիքին են, որ ազգային մարմինները, յանձնին ՊԺ եւ ԹԽ իրենց որոշումներն ընդունում են միակողմանի եւ հաշի չեն առնում համայնքում գոյութիւն ունեցող այլ տեսակետները: Դուք անձամբ ինչպէ՞ս էք բնութագրում այդ:

Պ.- Իհարկէ միակողմանիութիւնը կարելի է շատ տարբեր ձեւերով մեկնաբանել: Ընդհանրապէս, թէ ի՞նչ է նշանակում դա, վերջին հաշուով պէտք է ասել, որեւէ կազմ, որեւէ որոշում, որ տալիս է, կամ որեւէ աշխատանք որ տանում է, նրա արդիւնքը չի կարող բաւարարել համայնքի բոլոր տարբերին: Ես համոզուած եմ, որ բոլոր տարբերը պէտք է քննադատելու հնարատրութիւն ունե-

ման եւ սա ոչ թէ համարում եմ բնական, այլ համարում եմ կարեւոր: Իհարկէ պայմանով, որ այդ քննադատութիւնները եւ այդ մտեցումները շտկելու, ուղղելու նպատակով լինեն, ոչ թէ եղածն էլ վտանգելու, չեմ ուզում կասկածել, որ այդպիսի մտայնութիւն էլ կարող է գոյութիւն ունենայ մեր համայնքում: Եւ եթէ չկան, չլինեն այդպիսի քայքայիչ հոսանքներ, բոլոր քննադատութիւնները եւ բոլոր սխալների մատնանշումները պէտք է հաշի առնեն: Որեւէ մարդ, որ գործի պատասխանատւութիւն է ստանձնում, տարողութիւնը պիտի ունենայ նաեւ իր սխալները լսելու: Իսկ ինչ վերաբերում է մեր կառոյցներին, եթէ մենք հաւատում ենք, եթէ իսկապէս աշխարհում այսօր տիրող ամէնից ընդունւած մտեցումը հասարակական, ընկերային խնդիրների ժողովրդավարութիւնն է, ժողովրդավարութիւնը պարզապէս նշանակում է մեծամասնութեան խօսք, եւ դա չի բացառում:

Լոյս.- Յաճախ եւ այսօր էլ նոյնպէս շատ է խօսում միասնականութեան մասին: Ձեր կարծիքն ի՞նչ է:

Պ.- Ես կարծում եմ միասնականութիւնն անպայման չի նշանակում ամէն հարցերում ամբողջական համաձայնութիւն, միասնականութիւնը նշանակում է հիմնական մէկ շարք սկզբունքային, ազգային հարցերում փոխ հասկացողութիւն: Ուրեմն միայն վերոյիշեալ նպատակների շուրջ է, որ կարող է միասնականութիւն գոյութիւն ունենալ, դրանից դուրս երբ առնչում է գործնական ձեւերի, երբ առնչում է մտեցումներին եւ այլն, կարծիքների, մտքերի, մտեցումների եւ գաղափարի տարբերութիւնը միասնականութեան բացակայութիւն չի նշանակում:

Լոյս.- Իսկ Ձեր կարծիքը եկեղեցական տարանջատման մասին ի՞նչ է: Արդեօք կարծում էք, որ տարանջատում գոյութիւն ունի՞: Օրինակ՝ մանաւանդ գիտէք, որ մեր իրանահայ թեմերը մինչեւ 56 թականները գտնուում էին Էջմիածնի հսկողութեան տակ եւ պատմական իրադարձութիւնների պատճառով անջատել եւ միացաւել են Անթիլիասին, որին համաձայն չէր Մայր Աթոռ Ս. Էջմիածինը: Դուք որպէս իրաւաբան ինչպէ՞ս էք տրամաբանում այդ հարցը: Արդեօք եթէ դա տարանջատում չէ, ապա ի՞նչ է:

Պ.- Իհարկէ դա Ձեր եզրակացութիւնն է: Ես չեմ կարող այդ եզրակացութիւնը ընդունել: Ամէն պարագային պատմական եւ քաղաքական պատճառներով պայմաններ են պարտադրել մեր ժողովրդին, որ եթէ այդպէս խորհենք պիտի հարցնենք թէ, ինչո՞ւ սփիւռք, ինչո՞ւ Հայաստան, ինչո՞ւ Ամերիկա:

Շատ յաճախ որեւէ կառոյցի գլխին կանգնում են տարբեր մարդիկ, որոնք ունեն իրենց նախասիրութիւնները, ունեն իրենց վարչական հետաքրքրութիւնները, ունեն իրենց մտեցումները: Վերջապէս կառոյցները ղեկավարում են մարդիկ: Եւ տարբեր ժամանակներում այդ մարդկանց մտեցումների բերումով կարող է պատահել, որ կառոյցները միմիանց մտենան, կարող է պատահել կառոյցները իրարից հեռանան: Սա եւ չեմ դնում ոչ այդ կառոյցների խորքում գոյութիւն ունեցող գաղափարախօսութեան հաշիւն եւ ոչ էլ եկեղեցու պարագաների: Մեր եկեղեցու միակ վարդապետութեան մէջ եւ տարանջատութիւն չեմ տեսնում: Միայն թէ մեր ղեկավարութիւնը թոյլ չպէտք է տայ, որ մեր մէջ գոյութիւն ունեցող քաղաքական մտքերը, զանազան թեքումները վարչական տարբեր տնօրինութիւնները ժողովրդի մէջ վերացնեն ասեմբ թշնամանքի:

Լոյս.- Երբեմն խօսում է, համայնքի մասնագէտ ուժերին մեր ազգային կառոյցների մէջ ներառելու մասին: Սակայն ցաւօք սրտի տեսնում ենք, որ այդպէս չի եղել: Ձեր կարծիքով ինչպէ՞ս պէտք է մտենալ այդ հարցին:

Պ.- Թե՛ս աշխատանքը սկսելու ժամանակ շուրջ երկու հարիւր հոգիանոց ցանկով տարբեր կազմերում պէտք է նշանակումներ անել: «Այլք» թերթի միջոցով մենք յայտարարութիւն տեցինք, որ ցանկացողներն զան եւ արձանագրեն: Յաւօք արձանագրողների թիւը 4-5 հոգուց չէր անցնում:

Լոյս.- Իսկ չէ՞ք գտնում, որ դա գալիս է անվստահութիւնից, քանի որ նախքինում չի կատարել:

Պ.- Ես չեմ իմանում, բայց վերջապէս քանի որ ԹԽ փորձում է, պէտք է միւս կողմից էլ արձագանք լինի: Մենք դիմել էինք նաեւ թաղերի պատգամատրներին: Թաղի պատգամատրները ցանկերը ներկայացրեցին եւ պիտի ասեմ, որ նշանակումների մէջ թաղերի պատգամատրների ներկայացրած ցանկերի մեծ մասը ներառեցին տարբեր կառոյցների մէջ եւ նա էլ այն չափով, որ առնչում էր ԹԽ նշանակումներին: Մէկ այլ կարեւոր բան եւս պէտք է նկատի ունենալ, եւ դա այն է, որ որեւէ կազմ, որ նշանակում է աշխատանքի համար, այդ կազմը պիտի լինի նաեւ այնպիսի մի կազմ, որի անդամները իրենք իրար հետ գործելու հնարաւորութիւն ունենան: Կան որոշ մարդիկ էլ, որ արժէք են ներկայացնում, սակայն խմբային աշխատանքի համար կարող են յարմար չլինել:

Լոյս.- Բայց փորձել էք անձամբ դիմել:

Պ.- Ոչ, երբ յայտարարում է, մարդիկ պիտի դիմեն եւ յայտնեն իրենց ցանկութիւնը: Ես միշտ ասել եմ եւ հիմա էլ կրկնում եմ, որ մենք դժբախտաբար վերջապէս որեւէ կազմ ընտրելու համար ճանաչում ենք որոշեալ թով մարդկանց, որով սահմանափակում է այդ շրջանակը: Այդ շրջանակը բացելու միակ ելքը այն է եղել, որ մարդիկ իրենք են դիմել: Իսկ ես միշտ ասել եմ, եթէ մարդիկ չեն դիմում, չի նշանակում, որ հետաքրքրւած չեն: Մենք էլ պիտի փորձենք առիթը ստեղծել, որ նրանք զան եւ մասնակցեն: Գոնէ ես միշտ դրան հաւատացած եմ եղել:

Լոյս.- Մենք ունենք համայնքի եւ երկրի մակարդակով գիտական, հասարակական եւ մշակութային գործիչներ, որոնց ճանաչում են արտերկրում, սակայն ցաւօք մեր համայնքը նրանց չի ճանաչում: Դա նշանակում է որ, մենք թերացում ունենք: Արդեօք համաձայն չէ՞ք:

Պ.- Եթէ այդպիսի բան պատահում է, այդ դա նշանակում է, որ մենք դժարութիւն ունենք ներսում: Եթէ այդպէս է, այդ, մենք պէտք է մեր ուժերին ինքներս էլ կարողանանք ներկայացնել եւ ճանաչել եւ նրանց կարողութիւններից լրացոյնս օգտել: Բայց որեւէ մարդու լրացոյն օգտագործումը, ըստ իս անպայմանօրէն չի նշանակում այդ մարդուն դնել վարչական կառոյցի մէջ, որովհետեւ վարչական խնդիրները այնպիսի մանր գործնական առօրեայ հարցեր են առաջացնում, որ այդ մտաւորական մարդուն դժբախտաբար իր մտաւորական աշխատանքից էլ ետ են պահում:

Լոյս.- Գայրոցների սեփականաշնորհման մասին եթէ կարելի է ասէք, որ արդեօք հնարաւորութիւն կա՞յ, որ մեր դպրոցները եւս սեփական դառնան:

Պ.- Մեր ազգային դպրոցների շէնքերի իննսուն տոկոսը գուցէ համարեա հարիւր տոկոսը ազգապատկան են:

Շար. էջ 20

ՃԱՐՏԱՐԱԳԷՏԸ

Արտասահմանից եկել է ճարտարագետ,
Շուքով զարդարած, մեծ-մեծ դիպլոմներով,
Ով չի ճանաչում, ես ծանօթացնեմ,
Տարօրինակ անձ՝ մեր ազգը չունէր:

Տեսքով կոկիկ է, հասակով բարձր,
Լեզուն ճարտար է, խաբուսիկ ու քաղցր,
Բայց արի խօսենք գործերի մասին,
Բոլորն ունայն, բոլորն փուչ ու սին:

Հիմնարկութեան մէջ պաշտօն ստացաւ,
Անցեալը իրա իսկոյն մոռացաւ,
Կատարեալ կերպով մի ամբարտաւան,
Իր ինչ լինելն անգամ ուրացաւ...

Պաշտօնի համար հոգի է տալիս,
Պատիւ, մարդկութիւն աչքին չի գալիս,
Միայն իրեն տան աթոռ մեծութեան,
Չլինի վրան իր կոչումը «...եան»:

Հետո որ խօսի, շատ ազնիւ մարդ է,
Լեզուն շաքարի, բերանը վարդ է,
Բայց թէ տակամաց ինչեր է անում,
Դժար կասկածես, իրօք շատ բարդ է:

Նա գործի անցաւ իբրեւ մասնագետ,
Արած գործերը կապ չունէր իր հետ,
Նա մասնագետ էր, միայն ճարտարագետ
Բայց ծածուկ ինչքան նա նենգ գործ ունէր:

Ձեռքից գալիս է լաւ լրտեսութիւն,
Մեծամեծերին ծածուկ տեսութիւն,
Բայց բանից տեղեակ չի բնաւ,
Էլ որքան ցինիկ, որքան կեղծութիւն:

Մեր ազգի միջում այդպիսի մի անձ
Չեմ տեսել երբեք անիրաւ, նախանձ,
Էլ քանի մարդկանց ոտքի տակն փորեց,
Եւ մեծ պաշտօն ու աթոռ ձեռք բերեց:

Այ քեզ կրթութիւն եւ վկայական,
Պաշտօն ու պատիւ ձեռք բերեց ինչքան,
Էլ սեւթեւթեւ էլ ցինիկութիւն,
Գործատերերին՝ դնրձաւ դուրեկան...

Այսպէս մարդիկ են ներկայ աշխարհում,
Գործի մէջ շատ-շատ բախտ են ձեռք բերում,
Այսպէս է հիմի մեր շրջապատը,
Լաւին համարում են ամէնից վատը:

Գրիգոր Չաքինեան

ՊԱՏԻԺԸ

Ես մանկութիւնս անց եմ կացրել գիւղում,
Մենք ունէինք սեփական տուն իր փոքրիկ այգով:
Տարբեր թռչուններ բոյն էին շինել մեր այգու ծառերին եւ
ճտեր հանել: Մի անգամ էլ մի փոքրիկ ճնճողակ մեր տան
պատի մէջ գտնուող փոքրիկ անցքում բոյն դրեց: Շուտով
լուեց ճտերի ծվլոցը: Նրանք յաճախ դուրս էին գալիս բնից,
իրենց մօր օգնութեամբ նստում պատի վրայ եւ արեւի ներքոյ
զարճանում: Մենք երեխաներս երբեք ձեռք չէինք տալիս
մայր ճնճողակին, կամ ձագերին: Դեռ մանկութիւնից միշտ
լսել էինք մեր ծնողներից, թէ, ով նեղացնի անպաշտպան
կենդանիներին, Աստուծ կը պատժի նրան: Դա մեծ մեղք էր
համարում:

Մենք միշտ ուտելիք էինք լցնում յատակին, բնի մօտ եւ
քաշում մի անկիւն, որպէսզի զարճացնենք ճնճողակներին:
Այնուհետեւ հաճոյքով դիտում էինք, թէ նրանք ինչպէս էին
հաւաքում կերը:

Մի օր տարօրինակ ձայներ լուեց ճնճողակների բնի
մօտից: Բոլորս վազեցինք դէպի բոյնը: Ազահ կատուն իր
հսկայ թաթը խոթել էր բնի մէջ: Խեղճ թռչունները այնպիսի
մի վայնասուն էին բարձրացրել, կարծես թէ օգնութիւն էին
խնդրում: Բայց մեր ջանքերը ապարդիւն անցան: Կատուն
ետ քաշեց, թաթի մէջ բռնած ձագերից մէկին: Յետոյ նա
բերանն առաւ ձագուկին, փախաւ, նստեց տանիքին ու
սկսեց խռնել նրան: Եթէ մենք օգնութեան չհասնէինք,
կորուստը արեւի մեծ կը լինէր:

Այդ օրանից մենք անընդհատ հսկում էինք բոյնը,
գնտակեցելով, որ կատուն պիտի վերադառնայ: Եւ այդպէս էլ
եղաւ: Այդ անիարկ չէր հրաժարում իր անիծեալ
«ոճրագործութիւնից»:

Նրանց ձայնը լսելով դուրս էինք վազում եւ քարեր
նետելով, աղմկելով փախցնում կատին: Աներես կատուն
յոյսը չէր կարում եւ նորից ու նորից էր յայտնուում:

Մի օր յաջողեց երկրորդը փախցնել եւ խռնել: Կատուի
արարքը չդադարեց:

Այդ օրը նորից լսեցինք թռչունների ձայնը. դա այսինքնը
կատուի հարթական այցը: Մենք էլ սկսեցինք քարերով
«ողջունել» նրան: Նա ուշադրութիւն չէր դարձնում ոչ
ճնճողակների ծվլոցին, ոչ էլ մեր քարերին: Մեծ թաթը մտցրել
էր բնի մէջ եւ խառնում էր, փորձելով ճանկերի մէջ առնել
հերթական գոհին: Նա կարծես թէ որոշել էր այդ օրը
յաջողութեամբ աւարտել իր որսը: Եթէ այդ արջակատուն
ձեռքս անցնէր, այնպէս կը բզկտէի, կը ճզմէի...

Մեր այդ քարատարափի ժամանակ կատուն ուժեղ ճչաց,
վեր թռաւ եւ ընկաւ ցած: Ես կարծեցի, թէ մէկն ու մէկիս քարն
էր կպել իրեն: Երբ մօտեցանք, կատուն թայրտում էր: Նրա
այն թաթը, որ մտցրել էր բնի մէջ ուտել էր, իսկ հսկայ
մարմնիդ սեւացել:

Պարզեց, որ թռչունների բնին կից օձի բոյն էր գոյութիւն
ունեցել: Նա ապրում էր ճտերի հարեւանութեամբ: Օձն այդ
պատի արեւի հին բնակիչն էր եղել, բայց երբեք ոչ մի վնաս
դէր հասցրել ճնճողակներին: Նկատելով վտանգը, օգնութեան
էր հասել հարեւաններին:

Գիւղերում օձեր շատ կան, որոնք ապրում են տան
պատերի մէջ, կամ առաստաղի տակ, բայց երբեք չեն
վնասում տան բնակիչներին:

Կատուի վախճանից յետոյ, ճնճողակները սկսեցին իրենց
խաղաղ առօրեան:

Մովսես Խորենացու պարսկերեն լիակատար թարգմանության հրատարակման առիթով

Վերջերս Թեհրանում լույս տեսավ Մ. Խորենացու «Պատմություն Հայոց»-ի պարսկերեն լիակատար թարգմանությունը, ընդարձակ նախաբաններով եւ ծանոթագրություններով թերթիս խմբագրի աշխատասիռությամբ, գրքի նախաբանը շահեկան գտնելով այսու ներկայացնում ենք սիրելի ընթերցողներին:


ԽՍՐ.

Հայ պատմագրությունը մեկ և կես հազարամյակի բեղմնավոր անցեալ ունի և ոսկեդարյան ժամանակաշրջանի ստեղծագործությունների գլուխգործոցն ու թագը՝ անկասկած Մովսես Խորենացու «Պատմություն Հայոցն» է: Այդ կոթողական գործը արժեքավոր աղբյուր է է համարվում ոչ միայն հայ՝ այլ նաև հայոց աշխարհի դրակից հնագույն ժողովուրդների պատմության համար, այդ շարքին է պատկանում առաջին հերթին պարսիկ ժովովուրդը:

Խորենացու մի փոքր դրվագի պարսկերեն թարգմանությունը լույս է տեսել Ապ. Հովսեփյանի և Էբր. Գեհգանի աշխատասիրությամբ 1951 թվականին Իրանի Արաք Քաղաքում, որը ցավոք չէր համապատասխանում գիտական աշխատանքի հույժ կարևոր պահանջներին, սակայն լինելով որպես առաջին փորձ, արժանի է բարձր գնահատականի:

Այսպիսով 1980 թվականին ստանալով պարսիկ իրանագետների խնդրանքն ու ի նկատի առնելով Խորենացու գործի պարսկերեն տարբերակի ամբողջական և ճշգրիտ թարգմանության անհրաժեշտությունը, տողերիս հեղինակը ընդառաջ գնալով այն իրականությանը, 1981 թվականին սկսեց աշխատանքը, որը 20 տարի անց գուգաղիպելով նվաստիս գիտական պաշտոնական գործունեության 20-ամյակին, այսօր լույս է ընծայվում:

Մույն գործը թարգմանեցինք առաջին իսկ տարում, և հաջորդ 12 տարիների ընթացքում ընդմիջումներով զբաղվեցինք դրա ստուգման, սրբագրման, ծանոթագրության և բնագիրը էլ ավելի հղկելու պարսիկ ընթերցողին դուր-ըմբռնելի դարձնելու գործով, ի հարկ է օգտվելով տպագրության արտոնություն ստանալու ժամա-նակամիջոցի առիթից Խորենացու մասին հրատարակված նոր ուսումնասիրություններն էլ ի նկատի ենք առել ներկա տեքստի պատրաստան համար:



Հարկ է նշել, որ գործի թարգմանությունը կատարելուց հետո տեղեկացանք պրոֆ. Գ. Մ. Նալբանդյանի թարգմանած Խորենացու հրատարակման մասին (ԵՊՀ, Երևան 1984): Այդ թարգմանությունը ուսումնասիրվեց իրանցի իրանագետների ու նվաստիս կողմից և արդյունքում նոր թարգմանության հրատարակումը էլ ավելի անհրաժեշտ դարձավ: Նալբանդյանի թարգմանության գրախոսականը մի առանձին հոդվածի նյութ է, սակայն հարկ ենք համարում դրա բազմաթիվ թերություններից մի քանիսը մատնանշել ստորև.

1-Նալբանդյանի թարգմանության պարսկերեն լեզուն խիստ հնաճ է, արաբականացված և ոչ ժամանակակից:

2-Թարգմանիչը ոչ մի իրավունք չունի իսկական բնագրի մեջ մեկնաբանություններ անելու, որը կատարել է Նալբանդյանը: Միայն տողատակերում և առանձին բաժնում հնարավոր է անել այդ:

3-Բոլոր անձնանունները ներկայացվել էին իրենց հայկական ձևերով, չգիտես իրանցի ընթերցողը ի՞նչպես կարող է կռահել իրանական տարբերակները: Ասպիսին ներկայացնելու համար խիստ աշխարտանք է հարկավոր:

4-Միայն թարգմանությունները բազմաթիվ են, օրինակ թարգմանիչը չգիտի Ս. Գրքի և Ավետարանի տարբերությունը, և այլն:

5-Բոլորովին սխալ են ներկայացվել որոշ անուններ, (էջ 37), (էջ 43):

6-Աշխարհագրական անունների հայկական ձևերն են օգտագործվել Նալբանդյանի թարգմանության մեջ, որոնք բոլորովին անձանոթ են իրանցի ընթերցողին:

7-Ազգերի անվանումները բոլորովին սխալ են քարգմանվել կամ նրանց հայկական ձևերն են ներկայացվել, օրինակ՝ Խորենացին «Իրան» բառը բոլորովին չի օգտագործել, նա օգտվում է պարսկաստան, պարթևների երկիր, մարաստան և այլն, քարգմանիչը այդ արել է իր կողմից:

8-Ժամանակագրական սխալ օգտագործումներ են նկատվում Նալբանդյանի քարգմանության մեջ, օրինակ էջ 87,88 և այլն, պրոֆեսորը իրեն նեղություն չի տվել Խորենացու գրաբար տարբերակը թերթելու և ճշգրիտ տարեթվերը ներառելու:

9-Թարգմանության մեջ կրճատվել են և բնագրից հանվել որոշ նախադասություններ և դարձվածքներ, օրինակ՝ նայել էջ 66:

10-Թարգմանիչը իրեն իրավունք է տվել ավելացնելու որոշ նախադասություններ, օր. նայել էջ 42:

11-Որոշ քերականական սխալներ տեղիք են տվել սխալ ըմբռնումների, օր. նայել էջ 49:

12-Պրոֆեսոր Նալբանդյանի քարգմանությունը չի կարող ծառայել որպես գիտական գործ իրանցի հետազոտողի համար:

13- Պրոֆեսոր Նալբանդյանի ամենամեծ թերությունը, բարոյական արժանիքների և չափանիշների անտեսումն է, նա իրեն է վերագրել ակադեմիկոս Ստեփան Մալխասյանի բովանդակալից ծանոթագրությունները, որոնք զետեղված են վերջինիս աշխարհար քարգմանություն մեջ: Այդ խնդիրը, չափազանց ցավալի է Հայաստանի գիտական բարձր մակարդակին և վաստակին վնասելու առնչությամբ:

Նշված և այլ թերությունների և իրանցի գիտնականների պնդումների և քաջալերանքի պատճառով էր, որ նվաստս որոշեց հրատարակել իր քարգմանությունը, կյանքի դժվարին պայման-ներում: Հույսով ենք, որ ընթերցողը այն կգտնի Խորենացու հարազատ քարգմանություն. նվաստս աշխատել է պահպանել նաև խորենացու ոճն ու մտածողության ոլորտը: Նաև լիահույս ենք, որ ընթերցողը սրա միջոցով կկարողանա մուտք գործել Խորենացու իրական աշխարհը, այնպես՝ ինչպես ներկայացնում է ինքը, և դրանով կծանոթանա հայոց Պատմահոր գլուխգործոցի բազմաթեղուն և բազմաբովանդակ նյութերին:

Տողերիս հեղինակը շնորհակալությամբ կընդունի հարգելի ընթերցողների դիտողություններն ու դրանք նկատի կառնի իր աշխատություններում:

Էդիկ Բաղդասարյան (Էդ. Գերմանիկ)
2001թ. դետեմբերի 27
Թեհրան
germanic@armenia.com

Շամառոտ ակնարկ իրանահայ գաղթօջախների պատմության

Էդ. Բաղդասարյան-Գերմանիկ

Հայ իրանական առնչությունները սկզբնավորվել են դեռևս իրանական պետականության կազմավորման ժամանակաշրջանում: Իրանում հայերը եղել են դեռևս մ.թ.ա. 6-րդ դարից: Դրանք հիմնականում զորամասեր էին, որոնք վասալական պարտավորություն էին կատարում՝ ծառայելով Աքեմենյան պետությանը: Ավելի ուշ զգալի թիվ էին կազմում նաև հայ առևտրականներն ու արհեստավորները: Իսկ որպես բնիկներ՝ դեռևս հնագույն ժամանակներից ապրել են Ատրպատականում կամ պատմական Պարսկահայքում (Թավրիզ, Մարանդ, Ուրմիա-Կապուտան, Խոյ, Հեր, Մարաղա, Սալմաստ-Չարեւանդ, Մակու-Արտազ, Ղարաբաղ-Փայտակարան են), որը հայկական պատականության անկումից հետո մտավ Իրանի կազմի մեջ:

Այդ շրջաններում հայերի թիվը զգալիորեն ավելացել է Տիգրան Մեծի (մ.թ.ա. 95- մ.թ.ա. 55) ժամանակ, երբ վերանվանելով վերոհիշյալ տարածքները, նա մեծ թվով հայ արհեստավորներ, գինվորականներ եւ պետական պաշտոնյաներ է վերաբնակեցրել այստեղ:

Հետագա ժամանակաշրջանում Իրանի հայ բնակչության թիվն ավելացել է հիմնականում բռնագաղթի հետևանքով:

Հայերի խոշոր բռնագաղթերը իրականացվել են մ.թ. 3-րդ դարում, (Սասանյան Արշավիր թագավորի կողմից), 4-րդ դարում (368-370-ական թթ.) Շապուհ 2-րդի Հայաստան կատարած առշավանքներից հետո: Հայ պատմիչների վկայությամբ այդ շրջանում Իրան են գաղթեցվել մի քանի հարյուր հազար հայեր, որոնց զգալի մասը բնակեցվել են Խուզիստանում եւ Իրանի հարավ-արեւմտյան շրջաններում:

Հայաստանում, քրիստոնեությունը պետական կրոն հռչակվելուց հետո իրանա-հայկական հականարտությունն սրվեց եւ ստացավ կրոնական գունավորում: Այդ պատերազմների բուն նպատակն էր տարածքային հարցերը, ինչպես եւ Հայաստանի տարածքով անցնող միջազգային առևտրական ճանապարհների տիրանալը:

387-591-ին Հայաստանի մեծագույն մասը (4/5) ենթարկվել է Ի-ի քաղ. ազդեցությանը:

Սասանա-բյուզանդական տիրապետության շրջանում (426-640 թթ.) եւս Հայաստանը պարբերաբար ասպատակել են պարսիկներն ու բյուզանդացիները, եւ մեծ թվով հայեր են գաղթեցվել այդ երկրներ:

Բռնագաղթված հայերին սպասում էր աննախանձելի ճակատագիր: 7-րդ դարի սկզբներին Իրանն ընկավ Արաբական խալիֆայի տիրապետության տակ, նրանք բուն տեղի ժողովրդի հետ մեկտեղ, ընդունելով մեհմեդականություն՝ ձուլվելով ու կորցրին իրենց ազգությունը:

Իրանում հայ բնակավայրերի նոր օջախներ սկսեցին ստեղծվել 11-րդ դարից՝ սելջուկ-մոնղոլների արշավանքների հետեւանքով: Այդ խոշոր գերեվարությունը Հայաստանից Իրան կատարել են սելջուկները 1048 թվականին: Արիստակես Լաստիվերտցին իր «Պատմության» մեջ պատմում է, թե ինչպես Տուղրիլ բեգի հրամանով սելջուկյան մի բանակ Իբրահիմ Յանալիի եւ Գթըլմուշի գլխավորությամբ մտնում է Հայաստան, սրով ու հրով քանդում, ավերում Հայաստանի 24 գավառները եւ մեծ թվով գերիներ վերցնելով ետ վերադառնում: Ըստ Մատթեոս Ուռեայեցու տեղեկության, սելջուկները 150.000 հոգի կոտորելուց հետո այդ թվով էլ հայ ազգաբնակչություն են գերեվարում եւ քշում Իրան: Բացի այդ, հայկական պետականության անկումից հետո՝ 11-րդ դ. Մակուի, Խոյի, Սալմաստի, Ուրմիայի, Ղարաբաղի եւ այլ նահանգների հայկական շրջանները մտան Իրանի պետության կազմի մեջ:

Արդեն 11-14-րդ դարերում հայկական բնակավայրեր կային Թավրիզ, Մարաղա, Ռաշտ, Սուլթանի քաղաքներում եւ Իրանի մի քանի այլ մարզերում, որոնք ունեին նաեւ թեմեր, այդուհանդերձ Իրանի հասարակա-տնտեսական պայմանները դրանց միավորման համար դեռեւս բարենպաստ չէին:

12-րդ դարում արդեն Իրանում այնքան մեծաթիվ էր հայ բնակչությունը, որ հայկական երկու խոշոր թեմեր են ստեղծվել՝ Ատրպատականում, Հեր եւ Ջարեւանդի թեմ եւ Սալմաստի ու պարսկական մայրաքաղաքի թեմ: Տեղեկություններ կան, որ այդ երկու թեմերի առաջնորդները մասնակցել են 1174 թվականին Հռոմկլայում հրավիրված ազգային եկեղեցական ժողովին:

Իրան գերի տարված բազմահազար հայ բնակչության մի մասը ոչնչանում է գերեվարության ճանապարհին, իսկ մնացածները, մասնավորապես արիեստավորները եւ առեւտրականները, կարողանում էին ոտքի կանգնել, համախմբվել եւ հայ գաղթօջախների հիմքը դնել:

Իրանահայ գաղթականության դրությունը զգալի չափով բարելավվում է Մելիք շահի գահակալության ժամանակ (1072-1092): Նա բարյացակամ վերաբերմունք ցուցաբերեց հայերի նկատմամբ, որի մասին անդրադարձել է Մ. Ուռեայեցին:

Իրանահայ գաղթօջախները ավելի զարգացման եւ Իրանի տնտեսական կյանքում սկսեցին խոշոր դեր կատարել մասնավորապես մոնղոլական տիրապետության շրջանում (1220-1385): Մոնղոլների՝ Հայաստանում կատարած ամենից մեծ գերեվարությունը տեղի է ունեցել 1236-1237-ին, որի մասին տեղեկություն է հաղորդում Կիրակոս Գանձակեցին: Մի այլ գերեվարություն կատարվել է Երզնկայից 1340 թվականին, որի մասին տեղեկություն է հաղորդում Սարգիս Գրիչը: Մոնղոլական գերիշխանության շրջանում հայ բնակչություն է տեղափոխվել Իրան ոչ միայն բռնագաղթի ճանապարհով, այլեւ մի մասը՝ կամովին: 13-րդ դարում, առեւտրական տարանցիկ ճանապարհները հարավից տեղափոխվում են հյուսիս: Այդ ճանապարհները Թավրիզի վրայով

անցնում էին Տրապիզոն եւ Այաս: Իրանում այն նոր ճանապարհների վրա հիմնվում են մի շարք առեւտրաշատ կենտրոններ: Մայր հայրենիքում ստեղծված ծանր պայմանները ստիպում են բազմաթիվ հայ առեւտրականների եւ արիեստավորների տեղափոխվել եւ հաստատվել Իրանի այս քաղաքներում, ուր գործունեության ավելի լայն ասպարեզներ էին բացվում իրենց առջեւ: Եվ այսպիսով, մոնղոլական տիրապետության շրջանում ստվարաթիվ գաղթօջախներ են ստեղծվում Թավրիզում, Սուլթանիում, Մարաղում, Խոյում, Սալմաստում, Մարաղայում, Ռեշտում եւ այլ քաղաքներում: Տեղեկություններ կան, որ բազմաթիվ հայեր եւ քրիստոնյա այլ ժողովուրդներ են ապրել Ռեյ քաղաքում, որը մինչեւ սելջուկյան արշավանքները, Արեւելքի առեւտրական խոշոր կենտրոններից մեկն է հանդիսացել եւ կոչվել է «Տիեզերքի վաճառատուն»:

Հյուսիսային տարանցիկ ճանապարհի վրա հաստատված քաղաքներից ամենից խոշոր հայաշատ կենտրոնն է հանդիսացել Թավրիզը (Դավրիժը), որը հայկական աղբյուրներում հիշվում է նաեւ Գանձակ Շահաստան անունով: Նա, ըստ ուղեգիր Կլավիտոյի տեղեկության, 16-րդ դարի սկզբներում ունեցել է ավելի քան 200,000 տուն՝ այսինքն՝ մոտ մեկ միլիոն բնակչություն: Թավրիզի հայ բնակչության թիվը բավականին մեծ է եղել: Վենետիկի նշանավոր ճանապարհորդ Սարկո Փոլոն, որը 1271 թ. եղել է Թավրիզում եւ իր ուղեգրության մեջ հանգամանորեն կանգ է առել այդ քաղաքի նկարագրության վրա: Նա տեղի քրիստոնյա ժողովուրդներից առաջին հերթին հիշում է հայերին: Մեզ հասած մի տեղեկության համաձայն, Թավրիզը 16-րդ դ. ընկեցել է 700 տուն բնակչություն 12 եկեղեցիներով: Համեմայն դեպս 14-15 դարերում Թավրիզում այնքան շատ հայեր են կենտրոնացված եղել, որ 1345 թ. գրված հայկական մի ձեռագրի հիշատակագիր՝ **Ներսես Գրիչը**, Թավրիզը համարում է ոչ միայն Ֆարսերի (պարսիկների), այլեւ հայերի մայրաքաղաք: Թավրիզի բնակչության ճնշող մեծամասնությունը հանդիսացել են արիեստավորներն ու առեւտրականները: Քաղաքին մոտիկ գտնվել են նաեւ հայկական գյուղեր: Թավրիզում գրված հնագույն հայկական ձեռագիրը 1334 թվականից է: Այն ընդօրինակված է Սարգիս Գրչի կողմից ոմն Հովհաննեսի պատվերով: Գրչի հիշատակարանում Թավրիզում հիշվում է երկու եկեղեցի՝ Ս. Սարգիս եւ Ս. Աստվածածին անուններով:

Թավրիզի հայ համայնքը այդ ժամանակ բաժանված է եղել երեք հատվածների՝ լուսավորչականների, կաթոլիկների ու հոնադավանների: Պարսկահայությունը Վատիկանի ուշադրության կենտրոնում է եղել: 13-15-րդ դդ. կաթոլիկ քարոզիչները լիքն էին պարսկահայ գաղթօջախներում: Վատիկանը քարոզչական երեք կենտրոն է ստեղծել Իրանում՝ Թավրիզում, Մարաղայում եւ Սուլթանիում: Նա 1330 թ. հռոմադավան հայության համար եպիսկոպոսական թեմ հիմնեց Իրանում՝ նստատեղ ընտրելով Սուլթանիեն: Առաջին թեմական առաջնորդն է հանդիսացել Հովհաննես Կոր (Jean de cor) արքեպիսկոպոսը:

Հարցազրույց Այդա...էջ 15-ից

Այն աշխատանքը, որ հիմա տարում է՝ այն ուղղութեամբ է որ, եթէ յանկարծ ժողովրդի տեղաշարժի պատճառով մի դպրոցի աշակերտների թիւը պակասում է, եւ այլեւս հնարատր չէ դպրոց ունենալ այդտեղ, մենք կարողանանք այդ դպրոցի շէնքից օգտուել ուրիշ ազգանպաստ նպատակների համար:

Լոյս.- Կան ազգային սրահներ, որոնք որեւէ միութեան սեփականութիւնը չեն եւ պատկանում են ազգային իշխանութեանը: Արդեօք այդ սրահներից օգտուելու համար որեւէ պայման կայ, թէ ոչ:

Պ.- Թիրիմացութիւն թող չստեղծի: Այդ սրահները ազգային իշխանութեան իրաւասութեան տակ չեն: Դրանք յանձնաձեռն են տարբեր միութիւններին: Այս յանձնումը կատարել է նախորդ շրջաններում, բայց այդ միութիւնների համար գոնէ ազգային իշխանութիւնների կողմից որեւէ սահմանափակում կամ արգելք չի դրւած, որ ուրիշներին օգտագործման թոյլտուութիւն չտրի: Յամենայն դէպս այդ սրահների տնօրինութիւնը տրւած է պատկան միութեանը, ուրեմն այդ միութիւնը պէտք է որ, ինքը տնօրինի, որ ինչպէս օգտագործի այդ սրահը:

Լոյս.- Գուցէ Դուք տեղեակ չէք, դա իրաւական խախտում կարելի է համարել: Օրինակի համար «Մուքերեան» սրահը, որը գտնւում է Մաջիդիւում, նրա օգտագործման պայմանների եւ կէտերի մէջ պարզապէս նշւած է, որ այդ սրահը տրամադրւում է ժողովրդին եւ ոչ մի թոյլտուութիւն չի տրւում որեւէ հասարակական-մշակութային միութեանը, այն իր սեփականութիւնը դարձնելու:

Պ.- Ամէն պարագային որեւէ սրահ վերջին հաշւով տրամադրւած է կամ տրամադրւում է որեւէ ղեկավար մարմնի, որպէսզի տնօրինի այն: Մէկը պիտի դրա տնօրինութիւնը ստանձնի եւ ազգային իշխանութիւնը կամ ԹԽ պարզապէս Ֆիզիկական հնարաւորութիւնը չունի միջնտելու, թէ այդ սրահում, ո՞ր օրը ի՞նչ ծրագիր կը լինի, կամ ինչպէ՞ս թոյլտուութիւն կը տրի եւ այլն: Ինչ, որ ազգային իշխանութիւնը կարող է ասել եւ յայտարարել, այն է, որ մեր տեսակէտից որեւէ սահմանափակում չկայ այդ սրահների օգտագործման համար:

Լոյս.- Երբեմն խօսւում է ՊԺ եւ ԹԽ կողմից մամուլին տրամադրւելիք օժանդակութեան մասին: Դրա մասին եթէ կարելի է տեղեկութիւններ տաք:

Պ.- Մամուլին օժանդակելու պարագան եղել է միայն մէկ դէպքում եւ դրա մասին ՊԺ արդէն զեկուցել է: Նիւթական օժանդակութիւնը տրամադրւել է հրատարակւող պատմա-մշակութային «Պայման» թերթին, այն էլ անվերադարձ օժանդակութիւն չէ, այն օժանդակութիւնն է, որպէսզի թերթի հրատարակումը յարատեւի եւ հասոյթը վերադառնայ Առաջնորդարանին: Դա արել է ելնելով այն բանից, որ «Պայմանը» միակ պարսկերէն լեզուով թերթը կամ պարբերականն է, որ ծանօթացնում էր մեր ժողովրդի մշակոյթը եւ պատմութիւնը պարսկալեզու մեր հայրենակիցներին:

Լոյս.- Միւսների կապակցութեամբ ի՞նչ կատք, չէ որ նրանք էլ կատարում են նոյն առաքելութիւնը, թերեւս ատելին:

Պ.- Ո՞ր թերթը նկատի ունէք:

Լոյս.- Օրինակ «Ապագա» Հայ-Իրանական մշակութային եւ հասարակական եռամսեայ հանդէսը:

Պ.- Նախ եթէ որեւէ մամուլ կամ որեւէ ազգային հաստատութիւն հարց ունի նիւթականի առնչութեամբ, պէտք է առաջին հերթին դիմում ներկայացնի: Դիմումը ստանալուց յետոյ հարցը կը քննարկւի ԹԽ, եւ յետոյ եթէ ԹԽ յարմար նկատեց իր պայմաններով իր որոշումը կը տայ:

Լոյս.- Մօտ քսան տարի է ինչ խօսւում է այս կամ այն միութեան մասին, եւ ոմանք որեւէ միութեան որդեգրած գաղափարախօսութիւնը չհաւանելով խիստ ակերզիա են ցուցաբերում եւ մի տեսակ թշնամական, խորթ հայեացք են ցուցաբերում այդպիսի միութիւնների նկատմամբ: Դուք վերջերս այցելեցիք Ի.Ա.Մ.Մ. եւ այնտեղ ելոյթ ունեցաք: Նմանատիպ մօտեցումները ինչպէ՞ս էք մեկնաբանում:

Պ.- Ես այդպէս չեմ մտածում: Դրա համար էլ բոլորովին ոչ երկմտութիւն ունէի գնալիս եւ ոչ երկմտութիւն ունեմ հիմա: Ես մտածում եմ ոչ թէ հիմա, այլ միշտ էլ այդպէս է եղել եւ թող տարբեր մտածենք, լաւ է, որ տարբեր մտածենք, բայց չի նշանակում, որ տարբեր լինենք:

Լոյս.- Արդեօք Թեհրանի ԹԽ յարաբերութիւններ ունի՞ միւս իրանահայ թեմերի հետ:

Պ.- Բնականաբար Թեհրանի ԹԽ միւս թեմերի հետ որոշ սահմաններում յարաբերութիւն ունի: Ամէն թեմ վարում է իր ներքին ազգային կեանքը: Այն հարցերում, որ միջթեմական են եւ առնչւում են բոլոր իրանահայերին, եթէ մենք որեւէ բան ենք ձեռնարկում գրում ենք երկու թեմերին էլ եւ խնդրում ենք իրենց կարծիքները յայտնել, որպէսզի նրանց լրացուցիչ տեսակէտները ներառւեն այդ ձեռնարկի մէջ: Այդ սահմաններում մենք բնականաբար իրար հետ յարաբերութեան մէջ ենք:

Լոյս.- Երկար տարիներ է, որ երկրաշարժի հարցով խօսւում, գրւում եւ յայտարարութիւններ են լինում, ինչպէս նախկին ԹԽ նախագահ եւ երկար տարիների հասարակական գործչի կողմից «Լոյս»ի մէջ այսպէս յայտարարութիւն եղաւ. «Որ նոյնիսկ կատարւած սխալի համար պէտք է ժողովրդից ներողութիւն խնդրել»: Եթէ կարելի է դրա մասին մի հակիրճ տեղեկութիւն տաք:

Պ.- Չեկոյցը արդէն տրւել է ժողովրդի պատգամաւորներին, մեր շրջանի սկզբին, թէն մեր պարտականութեան մէջ չէր, որովհետեւ սա նախորդ ՊԺ նախորդ ԹԽ գործունէութեանն էր կապւում: Այդ քայլը արեց ժամանակին եւ իր ժամանակին գնահատականը դրական կամ բացասական ստացել էր իր ՊԺ կողմից: ՊԺ դիւանը յարմար նկատեց մեզ եղածի մասին տեղեկացնել: Մենք էլ որեւէ հակառակութիւն չունէինք, որ ՊԺ-ում զեկոյց ներկայացւի մանրամասը արածի մասին: Ես դրա մանրամասնութիւնների մասին բնականաբար չեմ կարող որեւէ նորութիւն ատելացնել: Նախ որեւէ նորութիւն չկայ, բացի այն որ յանձնել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնին: Այդ յանձնումն էլ կատարել է նախորդ շրջանի ԹԽ որոշումով: Ես ոչ մի արգելք չեմ տեսնում ժողովրդին տեղեկացւի կատարածի մասին եւ դա պէտք է ձեռնարկի ՊԺ ոչ թէ մենք: Ես կարծում եմ այդ գեկոյցի ներկայացումով շատ բաներ կը պար-գաբանւեն:

Պ.- Մեզ փոխանցւած հաշիւների մէջ որեւէ մնացած գումար այդ հաշիւներից չկայ, եւ դրանից բացի հէնց մեր շրջանի այդ գումարներից առաւել ծախսել է սարքաւորումները պահելու համար, մինչեւ յանձնւի Մայր Աթոռ Էջմիածնին:

Հարցազրույցը վարեց էր. Բաղդասարեանը

ԵՐԿՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՀԱՔԱՐԱԽՏԸ ԿԱՆԱՆՑ ՍՕՏ

Harvard Women's Health Watch
ամսագիր, 2001թ., Յուլիս
**Թարգմանեց
Լեւոն Սիարոնեանը**

Եթե ձեր տարիքը 40-ից վեր է, ունեք յաելելալ քաշ, իսկ չէք զբաղուում մարմնամարզով, ապա դուք կանգնուում էք երկրորդ կարգի շաքարախտի վտանգի դիմաց, որն այդ հիւանդութեան առաւել տարածուած տեսակն է: Եւ դա ունի իր անցանկալի առնչութիւնները, մասնաւորապէս կանանց պարագային, ոչ միայն այն պատճառով, որ կանայք, առաւել քան տղամարդիկ ենթակայ են դրան այն պատճառով, որ կանայք անհամեմատ աւելիով են դրա բարդութիւններից: Շաքարախտով տառապող կանայք եօթ անգամով աւելի շատ են ենթակայ սրտի հիւանդութիւնից մահանալու իսկ ոչ-շաքարախտաւոր կանայք: Տղամարդկանց պարագային այդ ռիսկը-թէ եւ լուրջ- չի անցնում երկու կամ երեք-պատիկից:

Շաքարախտաւոր կանայք, տղամարդկանց համեմատութեամբ, նաեւ ունենում են արեան խոնուումի հետեւանքով առաջացած սրտի կածածի յաճախակիութիւն:

Սրտի հիւանդութեան դէպքում շաքարախտաւորը միանգամայն կորցնում է այն առաւելութիւնը, որ նախադաշտանողադարի շրջանում կանայք ունեն տղամարդկանց նկատմամբ:

Գիտութիւնները դեռ չզիտեն, թէ որոնք են երկրորդ կարգի շաքարախտի հետ կապուած մեխանիզմները: Սակայն յայտնի է, որ դրանք շատ աւելի բարդ են, քան ինչ ենթադրում էր մինչ այս եւ ներառում են բազմաթիւ գեներ, մարմնի զանազան օրգաններ, նիւթափոխանակման գործընթացներ: Բարեբախտաբար, բարդութիւններին ծանօթանալուն զուգահեռ աճել է բուժման հնարաւորութիւնը վերջին տարիներում: Առաւել լաւ լուրն այն է, որ պարզել է, թէ որքան ազդու կարող են լինել սննդակարգը եւ մարմնամարզը հիւանդութիւնը կանխելու կամ խստութեան աստիճանը մեղմելու մէջ:

ՀԱՔԱՐԱԽՏԻ ԸՆՏՈՒՆՔՆԵՐԸ

Շաքարախտը երեւան է գալիս, երբ (glucose) (արեան շաքարը) չի անցնում բջիջներից ներս եւ փոխարէնը կուտակուում է արեան մէջ: Մեր մարմինը պէտք ունի գլուկոզի - պարզ տեսակի մի շաքար, որը ներուժ է հայթայթում բջիջներին- որպէսզի լաւ աշխատի: Գլուկոզի գլխաւոր աղբիւրը մեր սպառուած ուտեստն է- մեծ մասամբ ածխաջրայիններ (carbohydrates), որը մարտողական օրգաններում տարրալուծուում է շաքարի (glucose) եւ բարձրացնում շաքարի մակարդակը արեան մէջ: Դրան որպէս պատասխան պանկրեատը (pancreas) արտաբորում է ինսուլին (insulin) հորմոնը, որը գլուկոզը մղում է բջիջներից ներս անմիջական սպառման կամ վկաններում ամբարելու համար: Այսպիսով, ինսուլինը վերականգնում է արեան շաքարի բնականոն աստիճանը:

Առաջին կարգի շաքարախտը- որն դասուում է ինքնավարակազերծ (auto-immune) հիւանդութիւնների շարքին, ոչնչացնում է պանկրեատի ինսուլին պատրաստելու կարողութիւնը եւ երեւան է գալիս սովորաբար մանկութեան կամ պատանեկութեան տարիքներում: Առաջին կարգի շաքարախտի ժամանակ մարմինը ի վիճակի չէ բաւարար չափով ինսուլին արտադրել, որի հետեւանքով բարձրանում է գլուկոզի չափաստիճանը արեան մէջ:

Երկրորդ կարգի շաքարախտը սկսում է մեծ մասամբ հասուն տարիքում: Այս պարագայում պանկրեատը բաւարար ինսուլին արտադրում է, սակայն ճարպային, մկանունքային եւ այլ կարգի բջիջներ խանգարում են ինսուլինի նորմալ աշխատանքը: Նման խանգարումը ծանօթ է ինսուլինի հանդէպ դիմադրութիւն (insulin resistance) անունով: Այսպիսով բարձրանում է արեան շաքարի աստիճանը. այդ խօսքով գոյանում է հիպերգլիսեմիա-ի (hyperglycemia) իրավիճակ:

Սոյն գործընթացի որպէս մի մաս լիարդը պատրաստում է յաելելալ շաքար, ինչպէս նաեւ տրիգլիսերիդներով հարուստ ճարպասպիտներ, որոնք պատճառ են դառնում վատ տեսակի խոլեստերոլի (LDH) յաելման եւ լաւ տեսակի խոլեստերոլի նւազման: Բարձրանում է արեան ճնշումը եւ ճարպակալում է գոյանում գոտկատեղի շրջակայքում: Նշուած փոփոխութիւնները տեղի են ունենում երկու սեռերի մօտ էլ, բայց առաւելաբար կանանց մօտ: Բոլոր շաքարախտաւորների 90 առ հարիւրը պատկանում են երկրորդ կարգին (Diabetes type two): Գենետիկան, տարիքի յառաջացումը եւ մի քանի դեղամիջոցներ կարող են ինսուլինի դիմադրութեան պատճառ դառնալ: Ոչ-գենետիկ կարեւոր ազդակներից կարելի է մատնանշել քաշի գերաճը եւ մարմնամարզի պակասը: Այս տարի 800,000 ամերիկացիներից որ կը ախտորոշւեն ինչպէս երկրորդ կարգի շաքարախտ ունեցողներ 90 առ հարիւրը կը լինեն նորմալից աւելի քաշ ունեցողներ: Թէ, ինչպէ՞ս է յաելելալ քաշը ինսուլինի դիմադրութիւն առաջացնում անյայտ է այժմ, սակայն նորագոյն պրպտումները յուշում են ինչ որ հորմոնի մասին, որին տեղ են ռեսիստին (resistin) անունը եւ որը խաթարում է ինսուլինի աշխատանքը:

Ընդհանրապէս, ինսուլին դիմադրութիւնը, միայնակ չի տանում կլինիկային շաքարախտի, որովհետեւ պանկրեատը ի վիճակի է յաելելալ ինսուլին մղել դէպի արիւն, բայց վերջիվերջոյ պանկրեատը սպառում է իրեն եւ չի կարողանում բաւարար չափով ինսուլին թողարկել: Հետեւաբար, գլուկոզը սկսում է կուտակել արեան մէջ եւ խնդիրներ յարուցել ամբողջ մարմնով մէկ: Կարճ ժամանակահատուածի վրայ շաքարախտի ախտանշաններն են՝ յոգնութիւն, սրտխառնուք, յաճախակի միզելու ցանկութիւն եւ տեսողութեան խաթարում: Շաքարախտը վերահսկողութեան տակ չառնելու դէպքում վնասում են ինչպէս փոքր, այնպէս էլ մեծ երակները: Հետեւանքը լինում է կուրութիւն, սրտանօթային հիւանդութիւն, երիկամների աշխատանքի ձախողում եւ նեարդների քայքայում:

Ձար. 1

Օրացոյց

Պատից կախած օրացոյցը ցոյց է տալիս, թէ հիմա որ ամիսն է, այսօր ամսի քանիսն է, շաբաթայ որ օրն է: Նրանով կարելի է հաշուել, թէ մինչեւ արձակուրդները, մինչեւ Նոր Տարին քանի օր է մնացել: Օրացոյցն անխտիր պէտք է գալիս ամենքին:

Մեր օրացոյցի հայրենիքը հեռաւոր Նեղուշի ավերն են, հին Եփրատը: Եգիպտացիներին անհրաժեշտ էր նախօրօք իմանալ, թէ երբ է վարարելու Նեղոսը, որպէսզի մինչ այդ հասցնէին մաքրել ջրանցքները, նորոգել ամբարտակները:

Եգիպտական քրմերը նկատել էին, որ ամառային արեւադարձի ժամանակ ամենակարճ գիշերին յաջորդող լուսաբացից առաջ երկնքում երեւում է Սոփիս (Սիրոս) պայծառ աստղը: Այդ օրն էլ սկսում էր վարարումը: Նրանք հաշուեցին, որ Սոփիսի մի երեւալուց մինչեւ միւսն անցնում է 365 օր: Այդ երկար ժամանակահատուածը նրանք բաժանեցին 12 ամսի՝ իւրաքանչիւրը 30-ական օրով (նկատեցի՞ք, որ դրանք մեր ներկայիս ամիսներն են), իսկ մնացած 5 օրը որպէս «յաւելում» գետեղեցին տարւայ վերջում:

Շատ ժամանակներ անց, մեր քականութիւնից առաջ 45թ. Հռոմէական կայսր Յուլիոս Կեսարն ուղղում մտցրեց եգիպտական օրացոյցում: Այդ օրացոյցում ամիսների տեւողութիւնը միատեսակ չէր, մէկը 30 օր ունէր, միւսը 31, իսկ Փետրւարը՝ 28 օր: Հէնց ամենակարճ չորս տարին մէկ սկսեցին աւելացնել մի օր: Այդպիսով տարին մենք անւանում ենք «Նահանջ տարի»: Այն ունի 366 օր:

Ստաբերում

Բայց հայ ժողովուրդը օրացոյցից ամենից շատ օգտւում է իր անցեալը մտաբերելու, իր փառքի օրերը յիշելու եւ իր հերոսներին մեծարելու պամար: Տրււայ բոլոր ամիսներից մեզ համար մնացել են ուրախ եւ դառը յուշեր: Իսկ Մայիս ամիսը մեզ համար եղել է իրօք փառքի ամիս, քանզի այդ ամսին էր, որ տեղի ունեցաւ «Սարդարապատի» հերոսամարտը, որում յաղթեց մեր ժողովուրդը եւ նոյնպէս այս ամսում էր, որ դարերից յետոյ հայ ժողովուրդը իր անկախութեանը ձեռք բերեց եւ հռչակեց Հայաստանի առաջին անկախ հանրապետութիւնը:

Ժամանակը ոսկի է

Իմ պապիկը՝ գործատեր,
Ամէն անգամ ինձ կասէր.
«Թէ դաս ունես՝ սովորիր,
Թէ գործ ունես՝ կատարիր:
Օրը կանցնի, կը գնայ,
Ինչ որ չանես՝ կը մնայ:
Եւ մի օր էլ կը տեսնես
Ուրիշներից յետ կընկնես...

Դու տղայ ես, ժիր տղայ,
Գործը քեզնից թող դողայ:
Ուշքդ վրադ միշտ պահիր,
Ժամանակդ խնայիր:
Չոր վայրկեան մի՛ կորցրու,
Ում որ կուգես հարցրու,
Աշխարհը մի խօսք է՝
Ժամանակը ոսկի է...»

Առաջադրանք

1. Գրի՛ր մի ասացածք ժամանակի մասին:
2. Պատժիր թէ ինչպէս ես օգտւում քո ազատ ժամերից:

Ա Ռ Ա Կ

Սարդը եւ մահը

Մի մարդ ուժասպառ է լինում:

- Ով մահ, եկ ինձ մօտ:

Մահը յայտնում է իսկոյն հարցնում է.

- Ինչո՞ւ ես ինձ կանչել:

- Ես քեզ կանչել եմ, որ խղճաս ինձ եւ օգնես այս շալակը մէջքիս դնեմ,- ասաց ուժասպառ եղած մարդը:

Եզրակացութիւն

Որքան էլ տխուր է լինում մեր կեանքը, այնուամենայնիւ մարդիկ ամենաձանր կեանքը գերադասում են մահից:

Հանելուկներ

Տէրը գնաց,

Ինքը մնաց:

Հետք

Ո՞վ է, որ մեզ նւիրում է

Այն ամէնն ինչ երեւում է:

Լոյս

Հանդ է գնում տախտակի պէս,

Տուն է գալիս տակառի պէս:

Կով

Եկէք Ծիծաղենք

- Չորք, ինչո՞ւ ես ամէն օր դասից ուշանում,- հետաքրքրեց ուսուցիչը:

- Մեր վերելակում յայտարարութիւն է փակցւած, որ այն հինգ հոգու համար , նախատեսւած: Ես էլ ամէն օր սպասում եմ, մինչեւ հինգ հոգի դառնանք:

Պատրաստեց Ա. Բարումեանը